Let me first of all thank the International Center for Human Development, and co-sponsors of this event for the wonderful organization. Indeed, such discussions are useful both in academic and practical terms. Academically they allow us to review at a regular basis our achievements and failures in building a new system of security in and around the European Union. They are also important in practical terms, since with high level of turnout by key diplomats and politicians these conferences appear to be much more than one would expect from a purely academic exercise.

This conference is not an exception. Today we are only a few days away from two important visits by President Sargsyan. One of those visits is to France, where President will be addressing a wide scope of bilateral issues, but obviously also talking to the President Sarkozy in his capacity of EU Presidency.

And the next visit is to Brussels. For President Sargsyan it is not a new city. He has had many chances to be there as Minister of Defense on NATO related missions, and as Prime Minister last year. But this visit now is different both because Serzh Sargsyan is now in a different capacity, but also because we have gone through the initial stage of the ENP planning and implementation, and there are voices in the Union supporting furthering the current scope of relations.

Dear Colleagues:

Last year I was asked to speak to a similar conference, and I spoke about the European Neighborhood Policy making on the go – we learn as we move. I offered that it will be with the European Union on one side and partner countries on the other to decide how far they wish, intend and can go in their bilateral and multilateral relations.

There have been key steps taken on both sides since. Neighbors have taken various yet committed positions on their European aspirations and Europe has been consistent in figuring out its expectations and plans over groups of its neighbors.

For countries of our region we have witnessed the emergence of a new initiative, known as Eastern partnership, to cover in a special treatment Ukraine, Moldova, Armenia, Georgia, Azerbaijan, and, under certain conditions – Belarus in the future. It is clear that this PolishSwedish initiative, supported by the incoming Czech presidency will still have to go through a substantive circle of discussions within EU before it materializes in a concrete consequence of policy steps. However, the way it is drafted in its current stage it is an ambitious and solid framework allowing for concrete and visible steps towards a safer European living space for citizens of both – the EU and ENP states.

And I would like to make the key argument today that this Eastern partnership can be a cure or a curse. The question is: will we jointly be able to use it to further motivate our public and empower the pioneers of European integration in neighborhood partner states, or will we contribute to the development of frustration and mistrust towards future Europe-related initiatives?

If the Eastern Partnership takes off with a strong push of planned, motivated and effective policies, it may bring about a true change in the life of citizens of ENP states and then it would change the whole perception of the EU concept in these six countries.

In my view, the only path towards success of the Eastern Partnership is the promotion of the regional identity in these six countries. In other words Eastern Partnership will bring nothing new with it, if it tries to substitute a drive for a joint effort by a purely arithmetical accumulation of bilateral ties between the Union and each of the six countries involved.

ENP is a tool that allows for an unlimited deepening of ties between members and partner states. So the salt and the true value of the Eastern Partnership is not in a promise of a special arrangement for visa facilitation or a General System of Preferences +, or anything else that could be achieved through ENP Action plans as well. The essence of the Partnership is the development of a safer regional living space, which is important both for Europe, and for the region.

In that regard, it is very important for the Eastern partnership to be inclusive and nonconfrontational. It shall help solve problems rather than create new ones. In other words this cooperation through EP shall not be designed or perceived as a zerosum game directed against anyone. And the six countries to be involved shall be seriously warned against any rhetoric or symbolism that can create tension or misunderstanding between players involved here. Moreover, no one shall feel the pressure Melians felt some 24 centuries ago in the famous Melian dialogue they have had with Athenians over not joining their league.

EU has to set agenda, rather than follow the existing one. It shall be more decisive, more outspoken, and more visible. Europe has a lot to offer particularly in this part of the world – and so it shall do. In return it shall set its own policy objectives and be demanding towards partners in meeting the expectations of that agenda.

It has to be strict towards partner states both in terms of their domestic policies, behaviors and records, but also in terms of their ability of developing horizontal ties and cooperation. In other words, the component of horizontal cooperation and regional projects shall be mandatory in this otherwise senseless effort. Just like post-worldwartwo Europe was made to learn the lessons of a common living space in face

of bigger challenges and threats now new neighbors shall be bound to learn those lessons. The key advancement in the Eastern partnership in comparison to the ENP action plan approach is the collective identity of the beneficiaries. And it shall be fully employed.

I have a feeling that in a dynamically changing international political arena there develops some rush for wellworded titles and labels, not always supported by firmness in implementation. How can we speak about European values, free movement of goods, services, finances and labor and at the same time tolerate blocked borders among EU neighbors? How long shall Europe continue considering the expediency of raising this issue with Turkey throughout ups and downs of accession talks with Ankara? With ENP in place and accession talks with Turkey underway that is not anymore a problem of a shut border between Armenia and Turkey. That dividing border is a threshold test on the system of European values.

Ladies and Gentlemen:

When I say the Eastern Partnership shall be truly inclusive, I mean it. I do not offer that it alone can address all the problems of this rather complicated region. I do not expect it to give answers to all questions. But I hope it can change the dynamic. It can pave the way for some, if not many, regional projects that really include all of the partnercountries.

If one looks at the geography of the Eastern Partnership, it is remarkable that putting aside Belarus, for which according to the current working version the perspectives are still remote and unclear, it represents by itself GUAM + Armenia. It therefore will take a lot of valuebased approach and efforts to build up the Eastern Partnership policy in a consistent, balanced and sustainable manner.

Actually, what in my view makes the Eastern Partners particularly difficult for the European Union – is that the motivations behind the European aspirations of partner

countries seem to vary significantly and development of a joint vector for them is not an easy task.

On the other hand, efficiency in accommodating that diversity has to be rooted in cooperation with other regional and global players. European policy towards these countries shall be mutually reinforced by combination of efforts and joint action by multiple donors, specialized expert communities, and diverse formats.

Of course, be it through Association Agreements, Action Plans, or any other form of institutional interrelation, the progress with each country shall be assessed and steps shall be taken on the basis of its own merits and achievements. But measuring those achievements shall necessarily include the country's contribution or obstruction of the prospects of regional cooperation.

Dear colleagues:

When preparing this key note I revisited my last year's notes. And I would like to give some comments on the developments since.

For Armenia this has been a busy year. Presidential elections and postelectoral aftermath are directly linked to Armenia's European aspirations. Last year I emphasized that ENP and its success will be measured upon the yardstick of the societal transformation, and of the achievement of certain level of Liberalism at Human relations level.

Events Armenia has lived through since have been sad. They were dramatic and have left a deep impression at the level of societal memory. But I would like to take courage to say that they have been also an important catalyst for a change.

I believe it is extremely important that in the aftermath of the events the authorities of the Republic of Armenia have clearly stated their will to mobilize international expertise to assess and consult on the status of Law enforcement agencies in the country. This has been the leitmotiv of the letters addressed by President Sargsyan

to both the President of the French Republic and the Head of the European Commission. And both of them replied by expressing readiness to help in full implementation of that process.

Last year I was speaking about the need to incorporate the Neighborhood action plans' points in wider policy agenda and action plans of the Government. I am happy that in Armenia we have succeeded in doing that.

Moreover, with major support of the Head of the European Commission delegation – Mr. Raul Luzenberger we have been able to work out a comprehensive paper on European Advisors for the Armenian government. I believe this is a major achievement that will allow for an effective and quick progress in Armenian – EU relations. And I would like to take a moment to thank Mr. Luzenberger, and Ambassador Smessow, representing the EU Presidency, for the committed attention to that initiative of the President.

Last, but by far not least last year I spoke of valuebased European identity. I think that to make the action plans work we shall further support and encourage the People to People Contacts. Here, I would like to address EU Embassies accredited in Yerevan. It is true that Armenia still has to go through a number of reforms to achieve the privileges of visa facilitation regime. However, I think that even today there are good grounds for, and there is obviously public expectation on, a higher level of flexibility in Consular departments dealing with visas for some groups of Armenian citizens. At least professionals, scientists, performers, students travelling on official invitations shall be treated in a more constructive way.

To succeed European integration has to be peopleoriented. It shall be the plea by the people to upgrade the level of relationship. And each time that public opinion shall be more dynamic in its demands than we – domestic and international public servants can deliver. Only that can bring about the true change at the societal level. We have to encourage that by more student to student contacts, more academic exchanges,

more interaction at the level of think tanks and research centers, and institutions of civil society.

Dear colleagues:

To sum up, I would like to reemphasize three key points I have raised in my key note:

1. Eastern Partnership is a welcomed initiative, which, however, has to prove its conceptual difference from the existing ENP tools. And in our view the key indicator of such difference shall be its regional dimension. To succeed Eastern Partnership shall be inclusive and shall take full advantage of efforts of other players applied in this region.
2. Evaluation of each partner country shall continue to be based on its own merits, achievements and failures. Progress with individual partners shall not be tied to an attempt to balance advancement of the region in general, since partners vary significantly on the grounds of their motivation for European integration.
3. People to people contacts shall be the cornerstone of all efforts undertaken, since the final aim of the neighborhood as well as the Eastern Partnership is a societal change in countries surrounding the European Union.

Thank you for your attention.







EUROPEAN UNION



COUNCIL OF EUROPE    CONSEIL DE L'EUROPE

**Եվրոպական հարևանության  
քաղաքականության ծրագիրը 2 տարեկան է.  
առաջընթաց, մարտահրավերներ և ապագա**

**Միջազգային համաժողով**

**28-29 հոկտեմբերի, Երևան**

**Ձեկույցների հավաքածու**



**Մարդկային զարգացման միջազգային կենտրոն**

ՆԱԽԱԲԱՆ ..... 59

**Ողջույնի խոսք**

ԹԵՎԱՆ ՊՈՊՈՍՅԱՆ ..... 60

ՄԱԹԻԱՍ ԶՈՐԲԵԼԻՈՒՄ ..... 62

**Ելույթներ**

ԱՐՏԱՇԵՍ ԴԱՐՔԻՅԱՆ ..... 65

ԷԿԱ ՍԵՊԱՇԿԻԼԻ ..... 68

ՎԱՅՆԱԿ ՊԱՆԱԴ ..... 78

ԱՐԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ ..... 91

ԿԱՐԵԼ ԴՈՖՅԱՏՐԱ ..... 95

ՕԼԵՆԱ ՉԵԲԱՆԵԿԻ ..... 101

ՎԻԳԵԼ ՍԱՐԳՅԱՆ ..... 112

«Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագիրը 2 տարեկան է. առաջընթաց, մարտահրավերներ և ապագա» միջազգային համաժողովը կազմակերպվեց Երևանում 2008թ. Հոկտեմբերի 28-ին և 29-ին: Համաժողովը կազմակերպվել էր ԵՄ պատվիրակության, Բրիտանական Միջազգային զարգացման գործակալության, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի, ԵԱՀԿ և ԵՄ երևանյան գրասենյակների աջակցությամբ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից, որը Հայաստանում առաջատար վերլուծական կենտրոններից է:

Համաժողովը մի դահլիճում էր հավաքել մասնակիցների Հայաստանից, Վրաստանից, Ուկրաինաայից, Թուրքիայից, Բուլղարիայից և Ռումինիայից, ինչպես նաև ԵՄ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ, ԵՄ Եվրոպական կազմակերպությունների ներկայացուցիչների: Համաժողովի հիմնական թիրախը համագործակցության և ինտեգրման հարցերն էին, որոնք դիտարկվում են որպես Եվրոպական արժեքների տարածման, Եվրոպական հարևանության ծրագրի, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (IPAP) և ԵՄ անդամությունից ի վեր Հայաստանի ստանձնած պարտավորությունների մասին տեղեկատվության տարածման լավագույն ուղին:

Համաժողովին մասնակցեցին ավելի քան 25 արտասահմանյան և 130 տեղական փորձագետներ, որոնք ներկայացնում էին պետական գործակալություններ, հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև Հայաստանում գործող մի շարք արտասահմանյան առաքելություններ և միջազգային կազմակերպություններ:

Սույն հրատարակությունը ի մի է բերում համաժողովի ընթացքում ինչպիսիք ելույթները և բաժանված փաստաթղթերը:

*Մարդկային զարգացման միջազգային  
կենտրոնի գործադիր տնօրեն*

## **Ողջույնի խոսք**

Տիկնայք և պարոնայք,  
Մեծարգո հյուրեր

Ողջունում եմ Եվրոպական ինտեգրման 4-րդ միջազգային համաժողովի բոլոր  
մասնակիցներին:

Ուրախ եմ, որ այս միջոցառումն արդեն ավանդական է դառնում. արդեն չոր-  
րորդ տարին է մենք հավաքվում ենք ուսումնասիրելու Եվրոպական ինտեգր-  
ման գործընթացը, սովորելու միմյանցից և կիսվելու մեկս մյուսի հետ: Այս տար-  
վա միջոցառումը յուրահատուկ է նրանով, որ աճել է դրա կազմակերպմանն ու  
իրականացմանն աջակցող կազմակերպությունների և ինստիտուտների թվա-  
քանակը, ինչպես նաև ավելացել է իրենց դիտարկումներն ու փորձը մեզ հետ  
կիսելու ցանկություն հայտնողների ցանկը:

2008 թվականը ծանր տարի էր Հայաստանի համար նախագահական ընտրու-  
յուններից հետո, մասնավորապես՝ Եվրոպական ինտեգրման գործընթացի և  
Եվրոպայի հետ համագործակցության ընկալման տեսանկյունից: Եվրոպական  
միության ընդլայնմանը զուգահեռ ԵՄ սկսել է Եվրոպական հարևանության  
ծրագիրը (ԵՀՃ), որին 2004 թվականին անդամակցեց նաև Հայաստանը: 2006  
թվականի նոյեմբերի 14-ին Հայաստանի կառավարությունը հաստատեց ԵՀՃ-ի  
Գործողության պլանը, ընդունվեց նաև ազգային ինդիկատիվ ծրագիրը:

Հայաստանի Հանրապետությունը արդեն իսկ հաջողությամբ իրականացրել է Եվ-  
րոպական համագործակցության և հարևանության քաղաքականության գործի-

քի (ԵՀՀԶԳ) մի քանի նախաձեռնություններ և ի ցույց դրել, որ պատրաստակամ է ավելի խորը ինտեգրվելու ԵՀՀԶԳ-ին՝ բացահայտելու համար, թե ինչպես ԵՄ հետ համագործակցությունը կարող է օգնել Հայաստանին վերականգնելու սոցիալ-տնտեսական հնարավորությունները և, թե ինչ ներդրում կարող է ապահովել այն դեմոկրատական ինստիտուտների զարգացման գործում՝ ընկալելով ԵՄ-ն որպես Հայաստանի համար թե՛ հիմնական տնտեսական գործընկեր և թե՛ մի կողմից ինստիտուցիոնալ միջավայր ներքին զարգացման, մյուս կողմից, առաջնային ձևաչափ՝ տարածաշրջանային զարգացման համար: Տարածաշրջանային համագործակցությունը խթանելու ԵՄ յուրաքանչյուր նախաձեռնություն, անկախ նրանից կլինեն դրանք ԵՀՃ թե որևէ այլ շրջանակներում, օրինակ՝ Սևծովյան համատեղ ջանքերի նախաձեռնությունը կամ ԵՄ ու ՆԱՏՕ-ի միացյալ ջանքերը տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը զարգացնելու ուղղությամբ (աջակցություն ժողովրդավարությանն և տարածաշրջանային համագործակցություն), միայն ողջունվում և խրախուսվում են:

ԵՀՃ-ի երկրները ունեն իրենց առանձնահատկությունները և իրենց յուրահատուկ դիմամիկան: Չկա եզակի մի կազմակերպություն, օրինակ՝ ՆԱՏՕ-ն, ԵԱՀԿ կամ ԵՄ, որ ունի պատրաստի լուծումներ այս կամ այլ տարածաշրջանի բոլոր խնդիրների համար: Սակայն համագործակցության քաղաքականությունն է, որ կխթանի կայունությունը տարածաշրջանի բոլոր երկրների համար: Ստեղծվել է բացառիկ մի հնարավորություն՝ վերածելու մեր տարածաշրջանը համագործակցության և կայունության տարածաշրջանի, որտեղ յուրաքանչյուր երկիր ունի իր ասելիքը, և ոչ ոք վտանգված չէ: Համագործակցությունը հնարավորություն կստեղծի լիովին հասկանալու բոլոր ներառված կողմերի շահերը, որն էլ հենց համընդհանուր հաջողության մեծագույն ձեռքբերումը կդառնա:

Բարի գալուստ համաժողով:

*Ֆրիդրիխ Էբերդ Շտիֆտունգ  
հիմնադրամի հարավային-կովկասի  
տարածաշրջանային տնօրեն*

Տիկնայք և պարոնայք, հարգելի մասնակիցներ, հյուրեր և ընկերներ,

«Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի անունից ցանկանում եմ ողջունել ձեզ Եվրոպական հարևանության քաղաքականության վերաբերյալ երևանյան այս համաժողովում:

«Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամն աջակցում է Հարավային Կովկասի բոլոր երեք երկրներում քաղաքացիական հասարակության կողմից ԵՋՔ Գործողությունների ծրագրերի իրականացման աշխատանքների վերահսկման գործընթացին: Այս տարվա օգոստոսին Վրաստանում տեղի ունեցած դեպքերը հաշվի առնելով՝ կցանկանայի օգտվել ինձ ընձեռնված հնարավորությունից և մեր ուշադրությունը հրավիրել Հայաստանում ԵՋՔի կոնկրետ մի կետի վրա, որն է հակամարտությունների կանխումը:

Թերևս ձեզանից ոմանք գիտեն, որ «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամը բավականին մոտ է կանգնած Գերմանիայի սոցիալդեմոկրատական կուսակցությանը և փորձում է աջակցել սոցիալական ժողովրդավարության արժեքների և սկզբունքների տարածմանն աշխարհում: Շատ հայտնի մի սոցիալդեմոկրատ՝ Վիլլի Բրանդտը, Գերմանիայի նախկին նախագահ և խաղաղության Նոբելյան մրցանակի թեկնածու, մի անգամ շատ պարզ, սակայն կարևոր մի միտք արտահայտեց հակամարտությունների կանխման վերաբերյալ: Մեջբերում եմ. «Իհարկե, խաղաղությունն ամեն ինչ էլ, սակայն ամեն ինչ ոչինչ է առանց խաղաղության»:

Խաղաղության պահպանումն ու ճգնաժամերի կանխումը Յարավային Կովկասում ԵՅՔ Գործողությունների ծրագրերի Էսկան մասն են կազմում: Կրաստանում, սակայն, դա չկարողացավ կանխել պատերազմը: Եվ սա հիշեցում է, որ ԵՅՔ իրականացման վերաբերյալ մեր քննարկումներում մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք այն գործիքներին, որոնք կարող են օգնել մեզ պահպանել խաղաղությունը և կանխել հակամարտությունները:

Կցանկանայի հատուկ նշել այս գործիքներից երկուսի մասին: Առաջինը հաշտեցումն է և վստահության ձևավորումը: Երբ խոսում ենք ԵՅՔ մասին, խոսում ենք նաև Եվրոպական ինտեգրման գործընթացի հաջողության մասին: Եվ կցանկանայի հիշեցնել, որ Եվրոպական միության հաջողության պատմությունը սկսվել է ոչ թե 1951թ. Եվրոպական ածխի և պողպատի համայնքի ստեղծման վերաբերյալ պայմանագրի ստորագրությամբ, այլ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի և Ֆրանսիայի հաշտեցմամբ: Պետք է հիշել, որ Ֆրանսիայի քաղաքացին, ով ծնվել է 1865թ. և մահացել 80 տարեկան հասակում, իր կյանքի ընթացքում երեք անգամ տեսել է, թե ինչպես են գերմանացի զինվորները ավերում իր տունն ու երկիրը: Բնական է, որ սա զայրույթ և ատելություն է ծնում: Այդուհանդերձ, Գերմանիայի և Ֆրանսիայի քաղաքական գործիչները խիզախ որոշում կայացրեցին սկսելու հաշտեցման գործընթաց, որն էլ արդյունքում ճանապարհ հարթեց Եվրոպական միությունում հաջողված տարածաշրջանային համագործակցության համար:

Նմանապես, Յայաստանի հարաբերություններն իր հարևան երկրների հետ քննարկելիս չպետք է մոռանալ հաշտեցման և վստահության ձևավորման կարևորությունը, եթե ցանկանում ենք հասնել ԵՅՔ նպատակների իրականացմանը Յայաստանում:

Երկրորդ գործիքը, որի մասին կցանկանայի նշել հակամարտությունների կանխման համատեքստում, ժողովրդավարացումն է: Եթե ուսումնասիրում ենք պատերազմների պատմությունը, հետաքրքիր բան ենք նկատում, երևույթ, որը գերմանացի փիլիսոփա Էմմանուել Կանտը սկսեց նկարագրել դեռևս 18-րդ դարում: Այդ երևույթը հետևյալն է. պատմության մեջ, շատ քիչ բացա-



ռությամբ, ժողովրդավար պետությունները չեն պատերազմում միմյանց հետ: Ժողովրդավարությունները հազվադեպ են պատերազմում այլ ժողովրդավարություններ հետ: Որքան ավելի ժողովրդավար են երկու պետությունները, այնքան ավելի քիչ հավանական է, որ նրանք բռնություն կիրառեն միմյանց հանդեպ:

Այս երևույթը պարզ մի պատճառ ունի. եթե պետությունների կամ որոշակի քաղաքական խմբավորումների ղեկավարները շահ ունեն պատերազմելու մեջ, մարդկանց մեծամասնության շահը խաղաղ կյանք վարելն է: Այսպիսով, այն քաղաքական համակարգը, որի իշխանությունը հիմնված է մարդկանց մեծամասնության ժողովրդավար մասնակցության վրա, պատերազմելու շեմին խիստ կարկանդակ է:

Այսպիսով, կարելի է ասել, որ ակնհայտորեն որոշակի կապ կա երկրի սահմանադրական կարգի և իր քաղաքացիների համար խաղաղության ապահովման իր կարողության միջև: Ամփոփելով այս երկու կետերը Չայաստանում ԵՅԶ իրականացման համատեքստում՝ կարելի է պնդել, որ ներկայում ժողովրդավարական կառույցների ամրապնդումը և հարևան երկրների հետ հաշտեցման համար անհրաժեշտ քաղաքական կամքի առկայությունը կարող է նշանակել խաղաղ և կայուն ապագայի համար կարևորագույն ներդրում կատարել, ինչպես նաև առավել մոտենալ Եվրոպային: Չուսով եմ, այս համաժողովը կարող է նպաստել այս առաքելության իրականացմանը և ուրախ եմ, որ «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամը կարող է աջակցել այս միջոցառմանը: Ցանկանում են արդյունավետ քննարկումներ:

Ճնորհակալություն ուշադրության համար:

*Մեծ Բրիտանիայի միջազգային  
զարգացման գործակալության  
հայաստանյան գրասենյակի տնօրեն*

Տիկնայք և պարոնայք, հարգելի գործընկերներ,

Կցանկանայի ձեզ փոքրիկ մի դրվագ պատմել այս համաժողովի վերաբերյալ: Յունիսին Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ քննարկում էինք այս նախաձեռնության ֆինանսավորման հավանականությունը: Սակայն այդ ժամանակ, քանի որ դեռևս բավականին վաղ էր այդ պայմանավորվածությունը որևէ փաստաթղթով ամրագրելու համար, որոշվեց դա անել այն ժամանակ, երբ արդեն կմոտենա համաժողովի կազմակերպման բուն ժամանակահատվածը: Այս ընթացքում Միացյալ Թագավորության Արտասահմանյան և միջազգային զարգացման նախարարության գրասենյակը (ԱՄՁՆ) մի քանի այլ նախագծերի առաջարկներ ստացավ, և քանի որ դրանք բավականին լավ ծրագրեր էին, մեր արձագանքը դրական էր: Այսպիսով, սեպտեմբերի վերջերին, երբ այս համաժողովի կազմակերպման վերաբերյալ ՄՁՄԿ-ի հետ պայմանագիր կնքելու ճիշտ ժամանակն էր, մեր բյուջեում համապատասխան գումարներ այլևս չկային: Բայց ես խոսք էի տվել, որ ԱՄՁՆ-ն ֆինանսավորելու է համաժողովը, և Թևանը հույս էր դրել մեզ վրա: Ես պետք է ինչ-որ բան անեի: Այսպիսով, ես գրեցի մեր լոնդոնյան գրասենյակ՝ բացատրելով, որ այն գումարը, որը խնդրում ենք, պետք է նպաստի Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) վերաբերյալ համաժողովի կազմակերպման աշխատանքներին, համաժողով, որի ընթացքում քննարկվելու էին ԵՀՔ շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների իրականացման ուղղությամբ կատարված քայլերը: Պարզվեց, ԵՀՔ-ն կախարդական հապավում էր, որը թույլ տվեց իրականացնել իմ խոստումը: Իմ բոլոր գործողությունների համար անմիջապես կանաչ լույս ապահովվեց, և ես արդեն կարող էի սկսել համաժողովի ֆինանսավորման

գործընթացը: Այս դրվագը ցույց է տալիս, թե ԱՄՆ-ն որքան է կարևորում եվրոպական հարևանության քաղաքականությունը:

Ձեզանից շատերին թերևս արդեն հայտնի է, որ դեկտեմբերին վերջանում է Միացյալ Թագավորության կողմից Չայաստանին տրամադրվող զարգացման երկկողմ աջակցությունը: Բրիտանական կառավարությունն այս որոշումն ընդունեց երկու տարի առաջ, երբ Տնտեսական և համագործակցության զարգացման կազմակերպությունը Չայաստանը դասակարգեց միջին եկամուտ ունեցող երկրների շարքում: Ըստ ԱՄՆ-ի առաքելության՝ իր աջակցության փաթեթի 80%-ը պետք է տրամադրվի ցածր եկամուտ ունեցող երկրներին, իսկ քակի որ Չայաստանը վերջին մի քանի տարիների ընթացքում տնտեսական աճի ամուսնով բավականին լավ ցուցանիշներ էր ապահովել, ԱՄՆ-ն համարեց, որ իր երկկողմանի աջակցությունն արդեն իրագործել է այն խնդիրները, որոնք սահմանավել էին տասնհինգ տարի առաջ:

Այս տարիների ընթացքում ԱՄՆ-ն աշխատել է Չայաստանի կառավարության հետ գրեթե բոլոր մակարդակներում՝ մշակելով և իրականացնելով տարբեր քաղաքականություններ և ծրագրեր, որոնք օժանդակել են կառավարման համակարգի և գործընթացի բարելավմանը: Վերջին ութ տարվա ընթացքում ԱՄՆ-ի մասնակցությունը պետական հատվածի բարեփոխման աշխատանքներին թույլ է տվել ստեղծել ծառայությունների մատուցման առավել արդյունավետ և թափանցիկ մեխանիզմներ: Հանրային ֆինանսավորման, մասնավորապես ծրագրային բյուջետավորման ոլորտին աջակցության արդյունքում բյուջետավորումն այսօր առավել նպատակաուղղված է և թույլ է տալիս սուղ հանրային ռեսուրսներն ավելի արդյունավետորեն օգտագործել:

ԱՄՆ-ը մասնավորապես հպարտ է իր մարզային զարգացման ծրագրերով, որի արդյունքում հնարավոր եղավ ներկայացնել տեղական իշխանություններին և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև համագործակցության նոր եղանակներ: Տավուշի և Գեղարքունիքի մարզերում այսօր նրանք սերտորեն համագործակցում են մարզային զարգացման ծրագրերի նախագծման, իրականացման և գնահատման շրջանակներում, որոնք մասնավորա-

պես անդրադառնում են աղքատության խնդիրներին: ԱՄՆ-ն հույս ունի, որ այս ծրագրերը կխրախուսեն այլ դոնոր կազմակերպություններին՝ նպաստելու Չայաստանում մարզային զարգացման ծրագրերին:

Այսպիսով, Չայաստանի առաջընթացը հաշվի առնելով, ԱՄՆ-ն որոշել է փոխել երկրի հետ իր համագործակցության բնույթը: Մեծ Բրիտանիայի երկկողմանի օգնության ծրագիրը, որը կամփոփվի 2008թ. դեկտեմբեր ամսով, այնուամենայնիվ կշարունակի աջակցել Չայաստանի տնտեսական զարգացման ջանքերին եվրոպական միության, Չամաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Միավորված ազգերի կազմակերպության անդամակցության շրջանակներում: Թերևս հենց սա է բացատրում ԵՅԶ-ին վերագրվող կարևորությունը և Մեծ Բրիտանիայի շահագրգռվածությունը Չայաստանում այդ ծրագրի հաջող իրականացմամբ հարցում:

Այս համաժողովի բոլոր մասնակիցներին մաղթում եմ հետաքրքիր և արդյունավետ քննարկումներ:

Ճնորհակալություն:

*Վրաստանի Եվրոպայի և Եվրատլանտյան  
ինտեգրման նախարարության Եվրոպական  
ինտեգրացիայի համակարգման  
վարչության պետի տեղակալ*

**Եվրոպական ձևափոխությունները  
և տարածաշրջանային ինտեգրումը.  
Վերջին զարգացումները  
Սևծովյան տարածաշրջանում**

Տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք ողջունել Հայաստանում կազմակերպված այս միջազգային համաժողովի մասնակիցներին, որը տարբեր երկրների և կազմակերպությունների ներկայացուցիչներին հնարավորություն է ընձեռել միասին հավաքվել: Ես վստահ եմ, որ կարծիքներն ու տեսակետները, որ մենք կիսում ենք, թույլ կտան ապահովել Եվրոպական միության և նրա սևծովյան հարևանության հեռանկարների և մարտահրավերների վերաբերյալ քննարկումների արդյունավետությունը:

Վրաստանի գործակցությունը Եվրոպական միության հետ հիմնված է Եվրոպական արժեքների և փոխադարձ, հիմնարար շահերի վրա: Մեր նպատակն է երաշխավորել ԵՄ-Վրաստան համագործակցության խորացումը մի շարք խնդիրների շուրջ, ներառյալ անվտանգության քաղաքականությունը, հակամարտությունների կարգավորումը, ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, քաղաքական հարաբերությունների խորացումը, ԵՄ ներքին շուկայի մատչելիության ավելի մեծ ծավալի ապահովումը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության խորացումը: Հաշվի առնելով Վրաստանում օգոստոսին տեղի ունեցած իրադարձությունները, այսօր հակամարտությունների և անվտանգության վերաբերյալ խնդիրները գերակա մտահոգություն են Վրաստանի համար: Այս

վտանգն էական է նաև Եվրոպական միության, ինչպես նաև ողջ Կովկասի և սև-ծովյան տարածաշրջանի համար:

Ռուսաստանի լայնածավալ ռազմական ագրեսիան Վրաստանի հանդեպ, որն ուղեկցվեց վրացական տարածքների բռնազավթմամբ, ինքնանպատակ չէր և չէր հետապնդում զուտ Վրաստանին իր ոգեշունչ ժողովրդավարական բարեփոխումների և ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ ինտեգրման հաստատուն կամքի համար «պատժելու» նպատակ: Թերևս դա նախապես պլանավորված գործողություն էր խորհրդային համակարգը վերածնելու հսկայական նախագծի և նախկին խորհրդային Միության տարածքում ռուսական գերիշխանության միջոցով իր կորսված փառքը վերականգնելու ջանքերի կարևորագույն մի բաղադրիչ:

Մինչև վերջերս Ռուսաստանը կիրառում էր հիմնականում տնտեսական, մասնավորապես՝ Էներգետիկ սեկտորին առնչվող գործիքներ վերոհիշյալ նպատակին հասնելու համար, սակայն այժմ պարզ է, որ Ռուսաստանը բավականին ինքնավստահ է, որպեսզի իրեն թույլ տա միակողմանիորեն անհավասար ուժ կիրառել և խախտել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները: Ռուսաստանի Դաշնության կողմից Աբխազիայի և Չարավային Օսեթիայի միակողմանի ճանաչումը մշտական սպառնալիք է ողջ տարածաշրջանի համար:

Եթե հաշվի առնենք Ռուսաստանի երկարաժամկետ աշխարհաքաղաքական շահերը, ապա ակնհայտ է, որ հակամարտությունների աղբյուրը, ինչպես նաև Վրաստանի հանդեպ Ռուսաստանի վերաբերմունքը պայմանավորված է Էներգետիկ ռեսուրսների շրջանառության նկատմամբ վերահսկողություն սահմանելու, հետևաբար, համաշխարհային հանրության վրա իր իշխանությունը հաստատելու ցանկությամբ, քանի որ ռուսական քաղաքականությունը, ինչպես պարզվեց, գործում է բավականին դաժան մեթոդներով՝ առանց հաշվի առնելու միջազգային օրենքները կամ էթիկան:

Չնայած Ռուսաստանի ագրեսիայի հետևանքով Վրաստանում տիրող բարդ իրավիճակին, որը շարունակվում է մինչ օրս և մարտահրավեր է նետում երկրում բարեփոխումների իրականացման գործընթացին՝ մենք պատրաստ ենք Եվրո-

պական միությանը միանալու մեր հավակնությունների առավել մեծ աստիճան դրսևորել: Այսօր մեր արտաքին քաղաքականությունն ավելի քան երբևէ միտված է դեպի ԵՄ, որը պատկերանում է որպես խաղաղության, ժողովրդավարության և զարգացման, կայունության, տարածքային ամբողջականության և մարդու իրավունքների պաշտպանության երաշխավոր: Վերջին զարգացումների լույսի ներքո (Ռուսաստանի ներխուժումը և երկրի նշանակալի մասի զավթումը) Վրաստանի շարունակական մղումը՝ միանալու Եվրոպական միությանը, ձեռք է բերել գրեթե գոյատևման կարևորություն: Վրաստանը հաջողությամբ հետևել է իր տնտեսական և քաղաքական բարեփոխումների օրակարգի իրականացմանը՝ կայացնելով առավել արդյունավետ սոցիալական ապահովության համակարգ և բարելավելով բիզնես միջավայրը: Երկրում շարունակվում են տնտեսության ազատականացմանն ուղղված բարեփոխումները, որոնք կայունացնում են տնտեսական աճը և թույլ տալիս ապահովել կայունության առավել մեծ մակարդակ:

1. Թափանցիկության և ժողովրդավարության մակարդակը բարձրացնելու նպատակով մի շարք կարևոր փոփոխություններ են կատարվել ընտրական օրենսդրությունում.

*(Քաղաքական կուսակցության խորհրդարան մտնելու համար նախաշեմը 7%-ից իջեցվել է մինչև 5%: Քաղաքական կուսակցությունը գրանցելու համար անհրաժեշտ ստորագրությունների թիվը 50000-ից նվազեցվել է մինչև 30000: Մեծամասնական խորհրդարանական մանդատների նվազագույն սահմանը սահմանված է 30%: Փոխվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին անդամակցելու կանոնները: Ընդունվել է Տեղական իշխանությունների գործունեության պետական վերահսկողության մասին օրենքը: Տեղական ընտրական հանձնաժողովներում ապահովվել է ընդդիմադիր կուսակցությունների առավել մեծ ներկայացուցչություն: Ընտրական գործընթացների բողոքարկման ընթացակարգերը կանոնակարգող օրենքը էականորեն հստակեցվել և պարզեցվել է: Խմբագրվել է ընտրության մասին օրենքը, որպեսզի սահմանափակվեն քաղաքական քարոզարշավի համատեքստում վարչարարական ռեսուրսների շահագործման հնարավորությունները: )*

2. Կոնկրետ քայլեր են ձեռնարկվել կոռուպցիայի, թմրանյութերի անօրինական շրջանառության, փողերի լվացման և թրաֆիկինգի դեմ պայքարի ուղղություններով:

(ԵՅՔ գործողությունների ծրագրին պարբերաբար տրամադրվող տեղեկություններ Վրաստանի հակակոռուպցիոն ազգային ռազմավարության վերաբերյալ, Կոռուպցիայի և պետական հատվածում շահերի բախման մասին օրենքի լրացումներ (մարտ, 2008թ.), հարկային ընթացակարգերի պարզեցում, համակարգում կոռուպցիայի հավանականությունը նվազեցնելու նպատակով ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Լրամշակվել է Վրաստանի փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրությունը՝ հաշվի առնելով փողերի լվացման և ֆինանսական ահաբեկչության ֆինանսավորման ինդիկատորները: Ավելացվել է կետ, որն արգելում է անանուն, ինչպես նաև գոյություն չունեցող անուններով հաշիվների բացումը, որի նպատակն է ապահովել հաճախորդների տվյալների ստուգման պահանջի իրականացումը):

3. Վրաստանի և մի շարք այլ երկրների միջև կնքվել են պայմանագրեր տրանսպորտի, Էներգիայի և հաղորդակցության համակարգերի զարգացման վերաբերյալ:

«Միջկասպիական և սևծովյան գազային միջանցք» ծրագրի իրագործման հավանականության ուսումնասիրություն, (INOGATE մայիս 2008թ.), «Եվրասիական նավթի տեղափոխման միջանցք» ծրագրի վերաբերյալ համատեղ հայտարարություն (մայիսի 23, 2008թ.), «Վերականգնվող էներգետիկա 2008» պետական ծրագրի սկիզբ (ապրիլ, 2008թ.), Մթնվարի և Խրամի գետերի հիդրո-ներուժը շահագործելու վերաբերյալ ուսումնասիրության հանձնարարականի մշակում (2008թ. առաջին եռամսյակ), 127 հազար հաճախորդների մոտ անհատական չափիչների տեղադրման գործընթացի ավարտ (հուլիսի 1, 2008), Վրաստանի էլեկտրաէներգիայի և բնական գազի մասին օրենքի լրամշակում՝ ուղղված «համակարգի պահուստային կարողությունների» զարգացմանը:

4. Կարևոր քայլեր են նախաձեռնվել գյուղատնտեսական հատվածում ավելի սերտ համագործակցության հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ:

2007թ. պաշտոնական բանացություններ սկսվեցին Վրաստանի և Եվրոպական միության միջև գյուղատնտեսական ապրանքների և այլ սննդամթերքի ծագման անվանման և աշխարհագրական տվյալների փոխադարձ ճանաչման և պաշտպանության վերաբերյալ համաձայնությունն ամփոփելու վերաբերյալ: Որոշակի քայլեր են ձեռնարկվել Սևնդի և սևուցման արագ արձագանքման համակարգի (RASEF) ընդունման ուղղությամբ:

5. Առողջապահության և սոցիալական պաշտպանության համակարգերն զգալիորեն վերակազմավորվել են ԵՅՔ Գործողությունների ծրագրով նախատեսվող պարտականություններն իրականացնելու նպատակով:



Առողջապահական հաստատությունների լիազորագրերի կրճատում նախկին 40-ից 4-ի, պետական առողջապահության և բժշկական ծառայության ծրագիր, սոցիալական վերականգնման իրականացում հաշմանդամների, տարեցների և ծնողական խնամքից զուրկ երեխաներին միտված պետական ծրագրերի միջոցով, Ոչ մասնագիտացված հիվանդանոցների հատվածի զարգացման ծրագրի իրականացում, որի արդյունքում 2007-2009 թթ. հարյուր նման հիվանդանոցներ կբացվեն երկրի ողջ տարածքում:

6. Բարձրագույն կրթության ոլորտում շարունակվում են բարեփոխումները Բոլոնյան գործընթացի սկզբունքներին համաձայն:

### **Համագործակցությունը սևծովյան տարածաշրջանում**

Սևծովյան տարածաշրջանային համագործակցությունը պետք է ապահովի այս տարածաշրջանի ապահովությունն ու անվտանգությունը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ԵՄ-ն դարձել է Սևծովյան տարածաշրջանի լիարժեք գործող ուժերից մեկը՝ սևծովյան ցամաքային ուժ: Ես ուրախ եմ, որ այսօր ինձ հնարավորություն է ընձեռվել ձեզ հետ քննարկել սևծովյան տարածաշրջանի զարգացման հեռանկարները և նրա դերը եվրոպական ռազմավարությունում:

Վրաստանը, որպես Սև ծովին հարակից պետություն, գնալով առավել մեծ կարևորություն է ստանում ԵՄ-ի համար, հատկապես 2004թ. մայիսի մեկին պատմության մեջ ԵՄ-ի ամենամեծ ընդլայնումից հետո, երբ Վրաստանը դարձավ ԵՄ-ի անմիջական հարևանը: Ավելի ուշ Վրաստանը, ինչպես նաև մյուս երկու կովկասյան երկրները՝ Ադրբեջանն ու Հայաստանը, միացան ԵՅԶ-ին: Այսպիսով, Հարավային Կովկասը համագործակցությունը շարունակում է նաև ԵՅԶ Գործողությունների ծրագրերի միջոցով:

Կասպից և Սև ծովերի տարածաշրջանն առավել գրավիչ և հետաքրքիր է դառնում ԵՄ-ի համար, քանի որ Յունաստանը, Ռումինիան և Բուլղարիան ԵՄ անդամներ են, Թուրքիան Եվրոպական մաքսակետերի միության անդամ է, Ուկրաինան և Մոլդովան ներգրավված են ԵՅԶ-ի մեջ և շարունակում են խորացնել իրենց հարաբերությունները ԵՄ-ի հետ: Ոստի, բնական է, որ ԵՄ ներկայությունն

ամալել տեսանելի է դառնում այս տարածաշրջանում, և աճում է նրա ներգրավվածությունն այստեղ:

ԵՄ լրջագույն մարտահրավերներից մեկը սևծովյան տարածաշրջանում իր կողմից խաղաղության և բարգավաճման ապահովման պատասխանատվության ստանձնումն է, ահաբեկչության և միջազգային հանցագործության դեմ պայքարը, ինչպես նաև գործընկեր երկրների հետ ամալել սերտ համագործակցության միջոցով հակամարտությունների կանխումը: Մեր կարծիքով, սևծովյան երկրները կարևոր մի տարածաշրջան են ձևավորում, որտեղ արագորեն զարգանում են քաղաքական և տնտեսական հարաբերությունները և որտեղ համաշխարհային ուժերից մեկը՝ ԵՄ-ն, ունի իր կենսական շահերը: ԵՄ չի կարող շարունակական կայունություն և բարգավաճում ապահովել, երբ Եվրոպայի այս մասում կայունության ճգնաժամ է: Ռազմավարության տեսակետից կարևոր է կայուն և անվտանգ միջավայր ստեղծել սևծովյան տարածաշրջանում, որպեսզի ԵՄ-ն կարողանա շահել: Առանց հակամարտությունների և անվտանգության խնդիրների անդրադառնալու չենք կարող լրջորեն մտածել տարածաշրջանային համագործակցության ներուժից օգտվելու մասին:

Մի քանի մեխանիզմներ կան, որոնք թույլ են տալիս ամրապնդել տարածաշրջանային համագործակցությունը սևծովյան տարածաշրջանում, դրանք են.

- ԵՅԶ Գործողությունների ծրագրերը,
- Սևծովյան տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպությունը,
- Ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպությունը՝ ԳՈՒԱՄ, որը ազգերի միջև ռազմավարական դաշինք է,
- Սևծովյան համագործակցությունը (Black Sea Synergy),
- Արևելյան գործակցության Նախաձեռնությունը:

Վրաստանի ԵՅԶ ԳԾ հինգերորդ գերակա ոլորտը շեշտադրում է կատարում օրենսդրության կիրակման ոլորտում տարածաշրջանային համագործակցության Նախաձեռնությունների անհրաժեշտության վրա՝ տարածաշրջանային համագործակցության այնպիսի ոլորտներում մասնակցության ապահովմամբ, ինչպիսիք են բնապահպանությունը, կրթությունը, սահմանների կառավարումը,

Էներգետիկան, տրանսպորտը և գիտատեխնոլոգիական զարգացումը: Հատուկ ուշադրություն է դարձված այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են համագործակցությունը Էներգետիկայի, տրանսպորտի և գիտատեխնոլոգիական զարգացման ոլորտներում, ԵՄ/Սև ծով/Կասպից ծով ցամաքային պետությունների և հարևան երկրների համատեքստում, երկկողմ և բազմակողմ համագործակցության հզորացումը սևծովյան տարածաշրջանում, ինչպես նաև՝ Սև, Բալթիկ և Կասպից ծովերի տարածաշրջաններում:

Վրաստանն հատկապես կարևորում է ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպության՝ ԳՈՒԱՄ-ի շրջանակներում տարածաշրջանային համագործակցությունը և վստահ է, որ այն կարևոր նախապայման է տարածաշրջանում տևական խաղաղության, կայունության և տնտեսական առաջընթացի համար:

Հատուկ նշանակություն է ձեռք բերում համագործակցությունը Սևծովյան տնտեսական համագործակցության տարածաշրջանային կազմակերպության շրջանակներում: 1999թ. մասնակից երկրները ընդունեցին ՄՃՏՀ-ԵՄ համագործակցության պլատֆորմը, որը հիմք հանդիսացավ ՄՃՏՀ կազմակերպության և ԵՄ հարաբերությունների և համագործակցության ինստիտուցիոնալ սկզբունքների համար: Այս փաստն ապացուցում է, որ ԵՄ-ն միշտ դիտարկել է ՄՃՏՀ որպես եվրոպական նոր կառուցվածքի բնական մի մաս:

Մեր տարածաշրջանում ԵՄ դերն ամրապնդելու քայլերից է «Սևծովյան համագործակցություն» ծրագիրը, որով ապահովվում է ԵՄ ակտիվ ներգրավումը այս տարածաշրջանում: Սույն նախաձեռնությունը ներառում է մի քանի գերակա ոլորտներ, որոնք իսկապես տարածաշրջանային բնույթ ունեն: ԵՄ առաջարկում է ուշադրությունը կենտրոնացնել հետևյալ հինգ ոլորտների վրա՝ բնապահպանություն, տրանսպորտ, Էներգետիկա, ներքին անվտանգություն և ժողովրդավարության ամրապնդում:

Որպեսզի Սևծովյան համագործակցությունը արդյունավետ լինի, մենք պետք է տարածաշրջանային կառույցներին պատշաճ կերպով ներկայացնենք սևծով-

յան պետություններին համախմբելու հաջողված փորձերը. ՄՃՏՀ-ն անդամների մեծ թվով և ինստիտուցիոնալ ամբողջական կառուցվածքով, որտեղ ներկայացված են Սև և Կասպից ծովերի երկրները, ինչպես նաև ԳՈՒԱՄ-ը, առանձնակի կարևորության գործիք են և այս առումով կարող են նշանակալի դեր ունենալ: Տարածաշրջանային համագործակցության առումով մենք հատուկ նշանակություն ենք տալիս Շվեդիայի և Լեհաստանի կողմից առաջարկված «Արևելյան գործակցություն» նախաձեռնությանը, որի նպատակն է բանակցություններ վարել առանց մուտքի արտոնագրի ճանապարհորդության, ծառայությունների և գյուղատնտեսական ապրանքների ազատ առևտրի տարածքների, ինչպես նաև Վրաստանի և մեր սևծովյան հարևանների՝ Ուկրաինայի, Մոլդովայի, Հայաստանի և Ադրբեջանի, հետ ռազմավարական գործակցության համաձայնությունների ձեռք բերելու շուրջ:

Մեկ անգամ ևս մեջբերենք Եվրոպական միության խորհրդի Վրաստանի վերաբերյալ արտահերթ նիստի արդյունքներով ԵՄ նախագահության եզրակացությունները. «Այսօր, ավելի քան երբեք, անհրաժեշտ է սատարել տարածաշրջանային համագործակցությանը և բարելավել ԵՄ հարաբերությունները իր արևելյան հարևանների հետ, մասնավորապես Եվրոպական հարևանության քաղաքականության, «Սևծովյան համագործակցություն» նախաձեռնության և Արևելյան գործակցության միջոցով, որը Եվրոպական խորհուրդը ցանկանում է ընդունել 2009թ. մարտին»:

Տարածաշրջանում տնտեսական զարգացումը անդամ երկրների կողմից դիտարկվում է որպես տարածաշրջանային անվտանգության հիմնական հենասյուն: ԵՄ և ԵՀՔ երկրների միջև երկխոսության շրջանակի ձևավորումը կարևոր քայլ է դեպի առաջ: Այդ շրջանակներում կքննարկվեն յուրաքանչյուր կողմի կենսական խնդիրներին վերաբերող ընդհանուր տարածաշրջանային հարցեր, ինչպիսիք են անվտանգությունը, սահմանների պատշաճ կառավարումը, թմրանյութերի անօրինական շրջանառության և անօրինական միգրացիայի ու կազմակերպված հանցագործության դեմ պայքարը, արդյունավետ կառավարումը, տնտեսական գործունեությունը և այլն: Սակայն փոխահավետ զարգացումը կարող է վտանգվել սևծովյան առավել ընդարձակ տարածաշրջանում՝ երկրների

միջև լարվածության և հակամարտությունների հետևանք հանդիսացող անկայունության և անվտանգության բացակայության պատճառով: Տարածաշրջանում անվտանգության և կայունության ապահովումը մեր երկրների հիմնական նպատակն է: Կայունության ընդհանուր նպատակին պետք է հասնել ակտիվ տնտեսական համագործակցության միջոցով: Այս տարածաշրջանում անվտանգությունը բավականին բազմաբովանդակ սահմանում ունի: Այն վերաբերվում է ոչ միայն ռազմական հարթույթին, այլև քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոններին: Տարածաշրջանը վճռական նշանակություն ունի Էներգակիրների մատակարարման ուղիների բազմազանության ապահովման և Կասպից ծովի ու Կենտրոնական Ասիայի երկրներից դեպի Եվրոպական շուկա տեղափոխման շարունակականությունն ապահովելու տեսանկյունից: ԵՄ-ի համար Վրաստանի աշխարհաքաղաքական կարևորությունն աստիճանաբար աճում է մասնավորապես Էներգետիկ անվտանգության առումով, և մենք կարծում ենք, որ Վրաստանի դերը, որպես Էներգակիրների տեղափոխման տարանցիկ երկիր, պետք է լինի Կենտրոնական Ասիայի և կասպիական Էներգետիկ ռեսուրսների բազմազան ենթակառուցվածքների զարգացմանն օժանդակելը, ինչպես նաև այդ ռեսուրսները դեպի Եվրոպա տեղափոխելու գործընթացի հեշտացումը: Էներգետիկ ոլորտում համագործակցությունը ենթադրում է Էներգետիկ անվտանգության վերաբերյալ երկխոսություն, որտեղ ներգրավված են լինելու ԵՄ-ն, արտադրողները, տարանցիկ երկրները և սպառողները: Միաժամանակ խրախուսվելու է իրավական և կանոնակարգային համապատասխանեցումը:

Կասպից և Սև ծովերի, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի երկրները համագործակցելով Վրաստանի հետ՝ լայն հնարավորություններ են ստանում ստեղծելու ընդհանուր Էներգետիկ տարածք ԵՄ, ինչպես նաև այլ երկրների հետ: Նոր տարանցիկ ճանապարհների ստեղծման շուրջ մեր երկրների պատրաստակամությունը նոր և մարտահրավերներով լեցուն նշանակություն է ձեռք բերում:

Համաշխարհային Էներգետիկ իրավիճակը բնութագրվում է խորացող հակասություններով, որոնք կշարունակվեն հաջորդ տասնամյակում: Մենք վկա ենք լինելու նավթի և բնական գազի պաշարներով հարուստ տարածաշրջաններում քաղաքական ռիսկերի աճի: Այն փաստը, որ ռեսուրսներով հարուստ երկրների

մեծամասնությունը քաղաքականապես անկայուն է, տեղ է հարթում համաշխարհային Էներգետիկ շուկայում հնարավոր ցնցումների համար: Այսօր ռուսական Էներգետիկ ռեսուրսների 90%-ն արտահանվում է եվրոպական երկրներ: Որոշ տվյալներ փաստում են ԵՄ և Ռուսաստանի Էներգետիկ ոլորտի փոխկապվածության մասին: Ռուսական նավթի 50%-ն արտահանվում է ԵՄ, որը կազմում է ԵՄ ներկրվող նավթի 37%-ը: Ռուսական բնական գազի արտահանումը կազմում է ԵՄ պահանջարկի 24% -ը և ԵՄ ներկրվող գազի 60%-ը: Նման իրավիճակում Եվրոպական միությունն չի կարող միավորված լինել, իսկ Կասպիական տարածաշրջանը չի կարող մոտենալ եվրոպական շուկային, այն դեպքում, երբ Ռուսաստանը տարածաշրջանը համարում է իր «ազդեցության ոլորտը», եթե իհարկե Կրեմլի գազի լծակը չվերցվի նրա ձեռքից: Ռուսաստանը Եվրոպայի միակ ամենախոշոր գազի մատակարարն է: Քանի որ գազի համաշխարհային շուկա գոյություն չունի, թանկարժեք գազամուղների կառուցումը սպառողներին ստիպում է երկարատև պայմանագրեր կնքել արտադրողների հետ: Սա նշանակում է, որ Մոսկվան միշտ շահարկելու է այս կախվածությունը՝ որպես քաղաքական և տնտեսական լծակ:

Վերջում կցանկանայի ամփոփել ելույթս՝ նշելով, որ համաշխարհային վերջին զարգացումները ապացուցեցին, թե որքան բարդ է լինելու ապագան, հատկապես կովկասյան երկրների համար: Այդ իսկ պատճառով մենք պետք է ամրապնդենք մեր համագործակցությունը, որպեսզի բավարարվեն մեր տարածաշրջանային շահերը: Վրաստանը պատրաստ է դիմակայել այս մարտահրավերներին՝ լիարժեքորեն համագործակցելով բոլորիդ հետ: Ժամանակակից իրականության մեջ, որտեղ քաղաքական և տնտեսական շահերը համակցված են, կայունության և անվտանգության ամրապնդման անհրաժեշտությունը մղում է այս տարածաշրջանի երկրներին դեպի ինտեգրում և տնտեսական համագործակցություն, որը կայուն հիմք կստեղծի ապագայի համար:

Շնորհակալություն ուշադրության համար:

*Եվրասիա հիմնադրամ,  
Ճրագրերի պատասխանատու*

### **Ձարգացումները սևծովյան տարածաշրջանում**

Սևծովյան ավազանի երկրներում և դրանց շուրջ անվտանգության դինամիկան իր ամբողջության մեջ աչքի է ընկնում լիակատար երկվության: Դեպի հարավ և արևմուտք ականատեսն ենք արագընթաց առաջընթացի՝ չնայած ժողովրդավարության և անվտանգության առջև ծառայած էական (սակայն թերևս աստիճանաբար նվազող) խոչընդոտների: Ռումինիան և Բուլղարիան 2007թ. մտան Եվրոպական միության մեջ, իսկ դեռևս 2004թ. անդամակցել էին ՆԱՏՕ-ին՝ այսպիսով ընդունելով այս կազմակերպությունների առաջարկները քաղաքականության, տնտեսության և պաշտպանության ոլորտներում ժողովրդավարական կառավարման վերաբերյալ: Դեպի արևելք և ավելի հարավ՝ Թուրքիան նշանակալի քաղաքական և տնտեսական առաջընթաց ապրեց, երբ 2002թ. «Արդարություն և զարգացում» կուսակցությունն անցավ կառավարության գլուխ, և այս ամենը նորից տնտեսական, քաղաքացիական-ռազմական և իրավական բարեփոխումները խոչընդոտող էական արգելքների պայմաններում:

Այսուհանդերձ, Թուրքիայի ժողովրդավարական ոգիսականը շարունակում է անավարտ մնալ: Եվրոպական միության անդամակցության նրա հայտն ակնհայտորեն լճացել է հիմնականում կողմերի աճող փոխադարձ անբավարարվածության պատճառով: Կիպրոսի շուրջ Թուրքիայի և ԵՄ դիրքորոշումների տարբերությունը, Թուրքիայի հրաժարումն անդրադառնալ 1915թ. «Չայկական ցեղասպանության» խնդրին կամ ճանաչել ներկա Չայաստանը նույնպես խոչընդոտում են նրա լիարժեք ինտեգրումը Եվրոպային: Այս քաղաքականությունները հետ են պահում Թուրքիային Եվրոպայից և կասկածի տակ են առնում նրա ժողովրդավարացման գործընթացը, քանի որ Թուրքիան հրաժարվում է վերա-

նայել իր իսկ պատմությունը: Նմանապես, Ռուսաստանի հրաժարումը Նույնն անել իր պատմության հետ զգալիորեն կասկածի տեղիք է տալիս հատկապես նրա նպատակների առումով, և սա չի վերաբերվում միայն Բալթյան պետություններին:

Թուրքիայի անկարողությունը անդրադառնալ Հայաստանի խնդրին միաժամանակ արտացոլում և նպաստում է Սև ծովի արևելյան ափին Հարավային Կովկասում շարունակվող անկայունությանը: Իսկապես, ողջ Հարավային Կովկասում տեսնում ենք ներքին բախումներ պետությունների միջև և ներսում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի շարունակվող հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև և Վրաստանի ներքին հակամարտությունները անջատողական, Ռուսաստանի կողմից աջակցվող Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հետ, որոնք Վրաստանի՝ Մոսկվայի հետ լարված հարաբերությունների մասն են կազմում: Ռուս-վրացական հարաբերություններն այնքան վատ են, որ իրական զինված բախումը ոչ անմտություն է թվում, ոչ էլ հեռավոր հավանականություն, թեև վերջերս որոշակի բարելավում այդ հարաբերություններում այնուամենայնիվ նկատվում է: Վերջին վեց ամսվա ընթացքում ակնատեսը եղանք վրացական զինված ուժերի գործողություններին Ռուսաստանի կողմից հովանավորվող խռովարարների դեմ, Վրաստանում հեղաշրջում պլանավորող ռուսական գործակալների ձերբակալությանը, Մոսկվայի կողմից Ռուսաստանից վրացիների վտարմանը, Ռուսաստանի կողմից պաշտպանվող հայտարարություններին այն մասին, թե Կոսովոն կարող է նախադեպ հանդիսանալ Վրաստանից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անջատման համար, այս երկու մարզերում կայացած հանրաքվեներին, որոնց Նորից աջակցեց Ռուսաստանը և որոնց արդյունքում բնակչությունը քվեարկեց անկախության օգտին և վերջապես, ցավոք սրտի, 2008թ. օգոստոսին Ռուսաստանի և Վրաստանի միջև ռազմական բախմանը:

Դեպի հյուսիս և արևմուտք, տեսնում ենք Ուկրաինայի կառավարությանը, որը մասնատվում է վարչապետ Յուլիա Տիմոշենկոյի, նախագախ Վիկտոր Յուշչենկոյի, նրանց համակիրների և երրորդ կողմը ներկայացնող Վիկտոր Յանուկովիչի քաղաքական անընդհատ պատերազմի արդյունքում: Չնայած ժո-



ղովրդավարացման գործընթացի առաջախաղացմանը՝ Մերձդնեստրյան տարածաշրջանում Ռուսաստանի կողմից հովանավորվող անջատողականների հետ հակամարտությունը Մոլդովայում հնարավորություն չի տալիս որևէ քայլ անել դեպի կարգավորումը: Վերջապես Ռուսաստան-ՆԱՏՕ լարվածությունը էներգետիկ հարցի շուրջ, ՆԱՏՕ-ի գորավարժանքները Սև ծովում, «սառեցված» հակամարտությունները Մոլդովայում և Կովկասում, Ռուսաստանի կողմից էներգետիկ գործոնի կիրառումը որպես քաղաքական նվաստեցման գործիք, Սև ծովում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի աճող հետաքրքրությունը, ինչպես նաև Բուլղարիայում և Ռումինիայում արևմտյան ռազմական բազաների ստեղծումը նպաստում են Արևելք-Արևմուտք հարաբերությունների վատթարացմանը:

## **Աշխարհառազմավարական և աշխարհաքաղաքական մրցակցություն**

Այսպիսով, Սև ծովում կարող ենք տեսնել երկու կամ ավելի անվտանգության սկզբունք: Սակայն, դրանցից միայն մեկն է առաջարկում անվտանգության, ժողովրդավարության և բարգավաճման դրական հեռանկար: Ավելին, Բուլղարիան և Ռումինիան վկայում են, որ ՆԱՏՕ-ի և ԵՄ անդամակցության շահագրգռվածությունը, ինչպես նաև Եվրոպայի հետ ինտեգրումը որպես ժողովրդավարացման հիմք, իրականում լավագույն անվտանգության քաղաքականությունն է: Սևծովյան տարածաշրջանի անվտանգության այս սկզբունքները համապատասխանաբար կազմված են թե՛ կոշտ անվտանգությունից, թե՛ կառավարման և գաղափարախոսության խնդիրներից, պետության կազմակերպման քաղաքական և տնտեսական հիմնահարցերից: Եվ չպետք է զարմանալ հետևյալ պնդումից, որ. «ակնհայտ է, որ Եվրոպական միությունը և Ռուսաստանը փորձում են ստեղծել բազմաբնույթ, համընդհանուր եվրոպական քաղաքականության տարածք գրեթե ամեն ինչի համար, բացի ամենախիմնարարից՝ ժողովրդավարությունը և մարդու իրավունքները: Դժվար չէ հասկանալ դրա պատճառները»: Ռուսական սկզբունքը՝ միակողմանիորեն ընդդիմանալու Սև ծովի հյուսիսային և արևելյան ափերին ցանկացած բազմակողմ կամ արևմտակա նացնող (Մոսկվան նույնացնում է այս երկուսը) ժողովրդավարացման և անվտանգության գործընթացներին, բերում է նորատոր հակամարտությունների, հե-

տամնաց և հակաժողովրդավարական կարգերի ձևավորման և բազմաթիվ կոշտ և մեղմ անվտանգության մարտահրավերների: Բացի այսպես կոչված «սառեցված» հակամարտությունները, Մոսկվայի հրաժարումը համագործակցել վերջին դեպքերից մեկի հետաքննության շրջանակներում, երբ մի ռուս բռնվել էր Ռուսաստանից Վրաստան ռազմական նշանակության ուրան անօրինական տեղափոխման համար, ցույց է տալիս անվտանգության բոլոր կոշտ և մեղմ վտանգները, որոնք առկա են այս տարածաշրջանի երկրներում, մասնավորապես՝ տարբեր անօրինական ապրանքների տեղափոխումը (ներառյալ մարմնավաճառները), թմրանյութերի և զենքի կտրուկ աճը, անօրինական միգրացիան և ընդհանուր հանցագործությունը: Հայտնի է, որ Օդեսայի նավահանգիստը և Ռուսաստանի պաշտպանության տակ գտնվող Մերձդնեստրյան կցորդ պետությունը ապօրինի փոխադրումների և առևտրի ապաստաններ են:

Ռուսաստանի համաժամանակյա ջանքերը գերակա դեր ձեռք բերելու ԱՊՀ երկրներում և հարավարևելյան Եվրոպայում Էներգետիկ ռեսուրսների վաճառքի ոլորտում, ինչպես նաև ռուսական ճնշմանը դիմադրող երկրների (ինչպիսիք են Վրաստանը, Ուկրաինան, Մոլդովան և Ադրբեջանը) դեմ գազը որպես զենք շահարկելը, միևնույն ժամանակ մրցակից արտադրողներին (ինչպիսին է Թուրքմենիան) թուրքական շուկայից դուրս մղելը, նրա նախկին դիմադրությունը վերջերս բացված Բաքու-Թբիլիսի-Ջեյհան գազամուղին, ավելի են շեշտում այս միջբաղաբակրթական տարածքում Էներգետիկ անվտանգության և միջազգային Էներգետիկ մայրուղու կարևորությունը: Որպես շանտաժի և նվաստացման միջոց Էներգետիկ խաղաքարտը օգտագործելու ռուսական ջանքերը, ռուսական Էներգետիկ ընկերությունների և կառավարության միջև կապերը, ինչպես նաև հայտնի կապերը հետախուզության և քրեականացված կազմակերպությունների հետ, բարձրացնում են Արևելյան Եվրոպայի ժողովրդավարական կառավարությունների հիմքերը խարխլելուն և նսեմացնելուն միտված կազմակերպված արշավի վտանգն ընդհանրապես, այդ թվում՝ Կովկասում և Բալկաններում: Չուգադիպություն չէ, որ ամերիկացի վերլուծաբանները, որոնցից է Բրյուս Ջեքսոնը, պարբերաբար պնդում են, որ գոյություն ունի այսպես կոչված «մեղմ պատերազմ», որ Ռուսաստանը վարում է Արևելյան Եվրոպայում (ներառյալ սևծովյան տարածաշրջանը) արևմտյան ազդեցության դեմ:

Ավելի ու ավելի հաճախ ականատեսն ենք դառնում ոչ միայն մեղմ պատերազմի, այլև ավելի դասական աշխարհաքաղաքական մրցակցության, մի կողմից՝ Վաշինգտոնի և Արևմուտքի, մյուս կողմից՝ Մոսկվայի միջև: Մոսկվայի նորոգված հարձակումներն այս տարածաշրջանում ամերկյան բազաների դեմ, ինչպես նաև Նրա դիմադրությունը Բուլղարիայի և Ռումինիայի հիմնականում արևմտամետ արտաքին քաղաքականությանը այս մրցակցության հիմնական մասն են կազմում: Ռուսական ռազմական խոսնակները նկարագրում են այս նոր բազաները և հնարավոր նոր առաքելությունները, ներառյալ՝ հրթիռային պաշտպանությունը և իշխանության պրոյեկցիան Կովկասում կամ Կենտրոնական Ասիայում, որպես սպառնալիքներ՝ ուղղված ռուսական շահերի դեմ, հատկապես երբ ՆԱՏՕ-ն արդեն պարզորոշ կերպով հայտարարել է, որ Կովկասում գազամուղի անվտանգության խնդիրներին բավականին լուրջ է վերաբերվում: Ռուսական դիմադրությունը հավանաբար երկրաչափորեն կաճի, եթե ԱՄՆ մտադրությունները համագործակցելու Ուկրաինայի հետ հրթիռային պաշտպանության ոլորտում նյութականանան:

Նմանապես, չնայած Ռուսաստան-ՆԱՏՕ համագործակցության խոսակցություններին, Մոսկվան որոշեց խանգարել ՆԱՏՕ-ի մասնակցությանը «Ակտիվ փորձ գործողություն» ծրվային վարժանքներին Սև ծովում: Այս վարժանքները ուղղված էին հենց անվտանգության մեղմ սպառնալիքների դեմ, որոնք վարակել են սևծովյան ավազանը և որոնք մանրամասնվեցին վերևում: Այստեղ Մոսկվան աջակցեց Անկարայի այն համառ պնդմանը, թե Մոնտրիոյի համաձայնագիրն արգելում է օգտագործել ռազմածովային նավերը նման վարժանքների ընթացքում նեղուցներով շարժվելու համար, նույնիսկ խաղաղ ժամանակներում, թեև ռուսական ռազմական ուժերը զարմանալիորեն հետաքրքրված էին մասնակցելու «Ակտիվ փորձ գործողություն» վարժանքներին Միջերկրական ծովում: Այդուհանդերձ, Ռուսաստանն այս հետաքրքրությունը ցուցաբերեց միայն այն բանից հետո, երբ փորձեց հատուկ պայմաններ պարտադրել այս վարժանքում իր մասնակցության առնչությամբ, որը 2001թ. ի վեր ՆԱՏՕ-ի անդամների հակաահաբեկչական ծրվային համագործակցության միանգամայն հաջողված դրվագ էր: «Ռուսաստանը ցանկանում էր իր սեփական առևտրային նավերը ազատել փոխադարձ ստուգման ընթացակարգերից, որոնք այդ գործողության

հիմքն էին: Այնուհետև նա պահանջեց, որպեսզի «Ակտիվ փորձի» կառավարումը իրականացվի ՆԱՏՕ-Ռուսաստան խորհրդի կողմից, նույնիսկ այն դեպքում, երբ նա խնդրեց Դաշինքին վճարել ռուսական մասնակցության համար: ՆԱՏՕ-ն մերժեց այս բոլոր առաջարկները, սակայն ի վերջո ձևակերպեց անհարմար մի համաձայնություն, ըստ որի ռուսական նավատորմը գործողությանը կմասնակցի ՆԱՏՕ-ի հետ համատեղ, սակայն ոչ նրա հրամանատարության ներքո»: Ռուսաստանը իրեն վերապահեց նաև վարժանքի ընթացքում զենք կիրառելու իրավունքը, քանզի այն պետք է գործեր ՆԱՏՕ-ի «Չինված ուժեր հարավ» (ՉՈւՅարավ) գորամիավորումների հետ համատեղ, սակայն ոչ որպես դրա մաս:

Սակայն, երբ ավազանի բոլոր մյուս պետությունները, բացի Թուրքիայից, առաջարկեցին այս վարժանքն իրականացնել Սև ծովում, Մոսկվան կտրականապես հրաժարվեց պաշտպանել այդ առաջարկը: Թեև այս պետությունների խնդրանքը հասկանալի է, հաշվի առնելով սևծովյան տարածաշրջանում անվտանգության խնդիրների կարևորությունը, Ռուսաստանի վերաբերմունքը զարմանալի չէր: Երբ 2003թ. ՆԱՏՕ-ն զորավարժանքներ էր իրականացնում Ուկրաինայի հետ Սև ծովի ափին, ռուսական մամուլը տեղեկացրեց, որ Ռուսաստանը դեմ էր այս վարժանքներին, քանի որ ռուսական զինվորականները չէին կարող հանդուրժել «օտար» ՆԱՏՕ-ական նավերի առկայությունը ծովում, որը իրենք համարում են իրենցը: Ավելին, քանի որ այս գործողությունների սցենարները ենթադրում էին հակաանջատողական գործողություն, ռուսական պաշտոնյաները մեկնաբանեցին այն որպես ՆԱՏՕ-ի աջակցություն Վրաստանին կամ Ուկրաինային՝ ընդդեմ Մոսկվայի կողմից աջակցվող անջատողականների Աբխազիայում կամ Դրիմում:

Ուկրաինական ափի համար նախատեսված հետագա գործողությունները, որոնք ներառում էին «ջրացամաքային ափհանում» ընդդեմ ահաբեկիչների (Ծովային հովիվ գործողություն), չէրյալ համարվեցին Ռուսաստանի կողմից հրահրված մասսայական ցույցերից հետո, որոնք անհնարին դարձրեցին ուկրաինական կառավարության և ՆԱՏՕ-ի համար այս գործողության իրականացումը: Երբ «Ակտիվ փորձ գործողություն» վարժանքը բարձրացրեց Սև ծովի հարցը, նորից երևան եկան նույն մտահոգությունները. վրաց-աբխազական հակամարտության միջազգայնացման հավանականությունը, որտեղ Ռուսաստանի կողմից

պաշտպանվող ռազմածովային մրցավազքի, զենքի անօրինական վաճառքի և այլ հանցագործությունների դեպքերը բազմաթիվ են, ինչպես նաև Ուկրաինայի հետ լարվածությունը ապագայում Սևծովյան նավատորմի բաշխման և Ազովի ծովի սահմանների որոշման շուրջ:

Անշուշտ, Մոստիոյի պայմանագրի դրույթների շուրջ պայքարը համախմբում է Ռուսաստանին և Թուրքիային ընդդեմ Վաշինգտոնի, քանզի երկուսն էլ դեմ են Սև ծովում ամերիկյան ներկայության ընդլայնմանը: Թուրքիայի դեպքում այս դիմադրությունն առաջացել է Իրաքի հետ պատերազմի պատճառով, սակայն դրա արմատներն ավելի խորն են և հասնում են մինչև թուրքական «Սևրյան սինդրոմ» (որն իր անվանումն ստացել է այն տարածքի անվանումից, որտեղ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստորագրվեցին Օսմանյան կայսրության տարածքի բաժանման մասին պայմանագրերը): Ամերիկյան դիվանագետները պնդում են, թե Թուրքիան հաջորդ՝ Լոզանի պայմանագրի (որի արդյունքում չեղյալ համարվեց Սևրի պայմանագիրը), ինչպես նաև Մոստիոյի պայմանագրի դրույթները անձեռնմխելի են համարում և, որ Թուրքիան զիջումների չի գևա, քանզի կարծում է, թե կշեռքին է դրվում իր ինքնիշխանության խնդիրը, եթե ռազմական նավերին թույլատրվի մտնել Սև ծով խաղաղ պայմաններում: Իր կողմից, Ռուսաստանը ՆԱՏՕ-ի և ամերիկյան ռազմական ուժերի հավանական ներկայությունը Սև ծովում դիտարկում է ոչ միայն որպես ռազմական սպառնալիք, այլև հնարավորություն ԱՄՆ-ի և/կամ ՆԱՏՕ-ի համար միջամտելու ԱՊՅ գործերին: Իսկապես, ԱՄՆ պնդում է, թե ինքը, կամ առնվազն ՆԱՏՕ-ն, իրավունքներ ունի Սև ծովում՝ ըստ Մոստիոյի համաձայնագրի:

Չետևաբար, Մոսկվան սևծովյան տարածաշրջանում ամերիկյան քաղաքականությունը պատկերում է որպես սպառնալիք ընդդեմ Ռուսաստանի արտաքին քաղաքականության կենսական նպատակի՝ նեո-կայսերական համատիրություն հաստատել ԱՊՅ-ի վրա և նույնիսկ ավելին՝ նպատակասլաց շեշտադրվածությամբ հրահրել կարգերի փոփոխություն ողջ ԱՊՅ տարածքում՝ ներառյալ Ռուսաստանը: Իսկապես, ցանկացած ԱՊՅ անդամ երկրի համագործակցություն ՆԱՏՕ-ի հետ անմիջապես արձագանք է ստանում Ռուսաստանից, որը ցույց է տալիս, որ ռուսական քաղաքական Էլիտան ՆԱՏՕ-ն և Եվրոպական միութ-

յունը դեռևս ընկալում է որպես Ռուսաստանի թշնամի: Յուրի Բորկոն գրում է. «Ռուսաստանի քաղաքական, գործարար և մտավորական շրջանակներում հավատացած են, որ ԱՊՅ երկրների ինտեգրման քաղաքականությունը անհամատեղելի է ԵՄ-ի հետ ռազմավարական գործակցությանն ուղղված քաղաքականության հետ, Ընդհանուր եվրոպական տնտեսական տարածքի մեջ ինտեգրվելու և արտաքին քաղաքականության և անվտանգության միջոցառումների սերտ համակարգման հետ: Այս շրջանակները հազիվ թե ստիպեն Ռուսաստանի նախագահին հրաժարվել իր եվրոպական քաղաքականությունից, սակայն նրանց փորձերը կարող են բավարար լինել Գործակցության և համագործակցության նոր համաձայնագրի կնքման միտքը խորտակելու համար»:

Այս իսկ պատճառով, միանգամայն հավանական է Ռուսաստանի՝ ՆԱՏՕ-ի և Յավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՅԱՊԿ) միջև համագործակցության վերաբերյալ կոչերը, ինչպես նաև նրա ռազմական դաշինքը Կենտրոնական Ասիայում, մեկնաբանել որպես ռուսական փորձ՝ ուղղված կանխելու ՆԱՏՕ-ի անմիջական համագործակցությունը Կենտրոնական Ասիայի կառավարությունների հետ և վերահսկելու այդ հարաբերությունները՝ այդպիսով նվազեցնելով ԱՊՅ պետությունների լիիրավ ինքնավարությունը պաշտպանության խնդիրներում: Օրինակ՝ 2004թ. ապրիլին Ուկրաինայում Կուչմայի կառավարությունը ՆԱՏՕ-ի հետ ստորագրեց համաձայնեցված դրույթները՝ հիմնավորող փաստաթուղթ: Այս փաստաթուղթն ամրագրում էր ուկրաինական տարածքի ջրերով Դաշինքի նավերի տեղափոխումը, որը ներառում էր Ազովի ծովը և Կերչի նեղուցը: Այնտեղ նշված էր նաև, որ Ուկրաինան խոստանում է. «ՆԱՏՕ-ին տրամադրել բոլոր անհրաժեշտ տեխնիկական, տեղեկատվական, բժշկական և այլ օգնություն վարժանքների իրականացման համար, ինչպես նաև լիարժեք ռազմական կամ խաղաղապահ գործողություններ՝ համաձայն «Գործակցություն և հանուն խաղաղության» ծրագրի»:

Ռուսական արձագանքը կանխատեսելի էր: Ռուսաստանը մեղադրեց Ուկրաինային այն բանում, թե այս համաձայնագիրը խախտում է 2003թ. կնքված այս ջրերի վերաբերյալ ռուս-ուկրաինական համաձայնագիրը, որտեղ նշված է, որ երրորդ կողմի նավերը չեն կարող նավարկել այդ ջրերում առանց երկու կողմերի

հատուկ համաձայնության, մի հայտարարություն, որը բացակայում էր վերոհիշյալ փաստաթղթում: Ավելին, Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության անանուն աղբյուրները հայտնեցին, որ «Ուկրաինայի պատրաստակամությունը՝ թույլատրելու օգտագործել իր տարածքը ՆԱՏՕ-ի չմասնավորեցված գործողությունների համար առանց ռուսական թույլտվության, չի համընկնում պայմանագրի դրույթին, որը մասնավորապես նշում է, որ կողմերից ոչ մեկը չի կարող թույլ տալ օգտագործել իր տարածքը որևէ կերպ, որը կարող է վտանգել մյուսի անվտանգությունը»:

Հաջորդիվ, ռուսական աղբյուրները ներկայացնում են այս խնդիրը հավանական ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության լուսյի ներքո: «Այս փաստաթուղթը ՆԱՏՕ-ի ուժերին այսպես կոչված «արագ մուտքի» հնարավորություն է տալիս դեպի Ուկրաինայի տարածք ոչ միայն զինավարժությունների ընթացքում, այլև ռազմական գործողություններ իրականացնելու ժամանակ: Սա նշանակում է, որ Ուկրաինան կարող է ցամաքային կայանատեղի հանդիսանալ ՆԱՏՕ-ի ցանկացած գործողություն իրականացնելու համար, ներառյալ նրանք, որոնք չեն ստացել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համաձայնությունը: Այս պայմաններում Հյուսիսատլանտյան դաշինքի արագ արձագանքման ուժերը կարող են գործել Ռուսաստանի եվրոպական մասի ողջ տարածքով մեկ և նույնիսկ շրջափակել Ռուսաստանի Դաշնության Սևծովյան նավատորմը, որը տեղակայված է Դրիմում, մինչև 2017թ., երբ ավարտվում է բազայի տեղակայման վերաբերյալ պայմանագիրը»:

Այս վերլուծությունն այնուհետև շարունակում է մեջբերել ռուսական մտահոգություններն առ այն, թե հետագայում Ուկրաինան կարող է ճնշում գործադրել Սևծովյան նավատորմի վրա և հնարավորություն ստեղծել, որպեսզի Սև ծովը վերջնականապես վերածվի ՆԱՏՕ-ի լճի՝ այսպիսով ամրապնդելով ՆԱՏՕ-ի օդային և ծովային երթուղիների կարողությունները, նսեմացնելով Ռուսաստանի ռազմավարական թիկունքի ողջ հասկացությունը, ինչպես նաև որևէ իմաստալից ռուսական կարողություն Ազովի կամ Սև ծովերում: Քանի որ Ուկրաինան պարզորոշ հայտարարել է, որ ցանկանում է, որպեսզի Ռուսաստանը հանի Սևծովյան նավատորմի իր բազաները Սևաստոպոլից, երբ 2017թվականին

ավարտվի ռուս-ուկրաինական համաձայնագիրը, գրեթե կասկածից դուրս է, որ ռուս-ուկրաինական լարվածությունը, որը բավականին սրված է Էներգետիկ և այլ հարցերի շուրջ առկա խնդիրների արդյունքում, Էլ ավելի կարվի նավատորմի, դրա ակտիվների և ենթակառուցվածքների բաշխման հետևանքով: Այսպիսով, ԱՊՅ-ի սևծովյան տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ռազմական ներկայության կամ Ուկրաինայի ՆԱՏՕ-ին անդամակցելու շուրջ ռուսական վախի այս վերլուծությունը հաստատվում է այն ենթադրության հիման վրա, թե առկա է շարունակական Ռուսաստան-ՆԱՏՕ ռազմական-ռազմավարական մրցակցություն, որը վերաբերվում է հատկապես ԱՊՅ սահմաններին: Ներկա պայմաններում դեռ պետք է տեսնել, թե ինչպես են ՆԱՏՕ-ի վարժանքները Ուկրաինայում վտանգում ռուսական անվտանգությունը, այն դեպքում, երբ Ռուսաստանը հայտարարել է ՆԱՏՕ-ի հետ իր գործակցության մասին: Պարզ չէ նաև, թե ինչպես կարող է Ուկրաինան դիտարկվել որպես Ռուսաստանի դեմ հավանական թշնամական դրսևորման բազա: Սակայն, սա ցույց է տալիս Ռուսաստանի Արտաքին գործերի և Պաշտպանության նախարարությունների և ռուսական կառավարության շրջանակներում գերակա տեսակետները: Այսպիսով, ՆԱՏՕ-ի կամ ԵՄ հետ համագործակցելու կամ սերտ կապեր ստեղծելու ուկրաինական ցանկացած ազդանշան հավանաբար փոթորկոտ արձագանքի կարժանանա Մոսկվայում:

Ուկրաինայի դեպքը մեկուսի դեպք չէ: Իրականում Մոսկվան նշում է, թե ոչ մի պետություն չի կարող միաժամանակ դաշնակցել թե՛ իր, թե՛ ՆԱՏՕ-ի հետ: Ավելին, իր «ազդեցության ոլորտում», Ռուսաստանը պնդում է, թե միայն ինքը լիարժեք հեղինակություն ունի անդամների պաշտպանության քաղաքականության վրա: Այսպիսով, Ռուսաստանը բացահայտ կերպով նորացրեց Բրեժնևի դոկտրինայի «նվազեցված ինքնավարություն» դրույթը, որը տարածվում է Կենտրոնական Ասիայի երկրների վրա, մասնավորապես ՆԱՏՕ-ի կամ ամերիկյան բազաների առնչությամբ: «Այս տարածաշրջանի երկրները Յավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամներ են: Եվ եթե այս երկրները որոշում են իրենց տարածքներում նոր բազաներ հիմնել, նրանք պետք է հաշվի առնեն Ռուսաստանի շահերը և համադրեն իրենց որոշումները մեր երկրի հետ»: Արձագանքելով այն տեսակետին, թե ԱՊՅ երկրները անկարող են հանդես գալ որպես լիարժեք ինքնավար, անկախ պետություններ, ռուսա-



կան դիվանագետները դեռևս ամբողջովին չեն ընդունում նախկին խորհրդային հանրապետություններին որպես իրական պետություններ, ինչպես ցույց է տալիս այն դեպքը, երբ ԵԱՀԿ հանդիպումներից մեկի ժամանակ մասնակիցներից մեկը խոսեց Վրաստանի՝ որպես «մի շրջանի» մասին: Սա պատահականություն չէր, այլ ավելի շուտ ներկայացնում է Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության խորապես արմատավորված վերաբերմունքը:

Սև ծովի երկու կողմերում այս հակասական միտումները խոսում են այն մասին, որ ժողովրդավարության և անվտանգության համար պայքարը ընթանում է զուգահեռաբար, եթե ոչ փոխկապակցված: Նույնիսկ կարելի է պնդել, թե մեկը մյուսից անբաժանելի է: Ռուսաստանի և Արևմուտքի հետ դաշնակցելու միջև բարդ ընտրությունը կապված է սոցիալական զարգացման երկու մոդելների հետ: Իսկապես, նույնիսկ որոշ ժուռ վերլուծաբաններ են համաձայնվում այս տեսակետի ճշմարտության հետ: ԱՊՅ-ում Ռուսաստան-Արևմուտք պայքարը պայքար է երկու անհամատեղելի համակարգերի միջև: Կառավարվող ժողովրդավարություններն ըստ էության խորհրդային համակարգի մեղմ տարբերակն են:

Եթե դեռևս 2005թ. առաջընթացի հնարավորությունը հավանական էր թվում, մասնավորապես Ուկրաինայի և Թուրքիայի ԵՄ անդամակցության և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման առումով, այսօր այս գործընթացներն այլևս կանգ են առել: Սևծովյան տարածաշրջանի հետ կապված այլ առաջատար միտումների հույսը ևս չիրականացավ այնպես, ինչպես ակնկալվում էր: Այդուհանդերձ, այն կառավարությունները և քաղաքական ուժերը, որոնք ցանկություն ունեն ընդարձակել անվտանգության տարածքը Սև ծովի արևմտյան ափի երկայնքով, չպետք է հուսահատվեն: Նախկին ձախողումների հիմնական պատճառներից մեկը ուշադրության շեղումն էր, ինչպես նաև ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և ԵՄ կամքի կորուստը, որը դրսևորվեց գործողության շարունակական բացակայությամբ, գործողություն, որի նպատակն էր լինելու սևծովյան բոլոր պետությունների առավել խոր ինտեգրումը, որպես նրանց անվտանգության դժվարությունները հաղթահարելու միակ եղանակ:

## **Ի՞նչ պետք է անել**

Եվրոպայում և Եվրասիայում ժողովրդավարացումը որպես ցանկալի անվտանգության քաղաքականություն դիտարկելու, սակայն միևնույն ժամանակ Մոսկվայի և «կառավարվող ժողովրդավարության» նրա թիվկոցի հետևում թաքնվողների կողմից այդ գործընթացը որպես մահացու սպառնալիք ներկայացնելու մարտահրավերին հեշտ չի դիմակայել: Տարածաշրջանում կառավարման բնույթի շուրջ այս գաղափարախոսական-քաղաքական պայքարն ավելի է ուժգնանում այնպիսի ռազմական մեգաուժերի ներգրավվածության պատճառով, ինչպիսիք են ԱՄՆ-ը կամ ՆԱՏՕ-ն, որոնք ավելի ու ավելի են տարածում իրենց հզորությունը դեպի ԱՊՅ և Ռուսաստան: Այդ իսկ պատճառով, այս ավելի մեծ անվտանգությունն ապահովելու գործընթացում հաջողության հասնելը շատ ավելի խրթին խնդիր է:

Սակայն, այս տարանջատող հանելուկն այլևս տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական կյանքի փաստ է: Եթե խաղաղությունը, առաջընթացը, բարգավաճումը, իրական ժողովրդավարությունը և անվտանգությունը պետք է հաստատվեն Սև ծովի հյուսիսային, հարավային և արևելյան խռովված ափերին, ապա տարածաշրջանի երկրների կառավարությունները պետք է առաջ տանեն եվրոպական արժեքները, որոնց մասին նրանք արդեն իսկ բացահայտ հայտարարել են: Եվ այս քայլը որևէ արդյունք կարող է տալ միայն ՆԱՏՕ և ԵՄ անդամակցության արդյունքում, որոնք կազմակերպություններ են, որոնք քաղաքականության, տնտեսության և պաշտպանության մեջ իրենց անդամների հետ հարաբերվում են ժողովրդավարական նորմերին և վարքի կանոններին համաձայն:

Վերոհիշյալ դիտողությունները ցույց են տալիս, որ Ռուսաստանը ոչինչ չունի առաջարկելու իր «գավառների», բացի սեփական շահը և իշխանության ծարավը բավարարելու համար ստեղծված հնարավորությունը: Սակայն, Մոսկվային պակասում են թե՛ միջոցները, թե՛ տեսլականը՝ ստեղծելու լեգիտիմ անվտանգության համակարգ այս տարածաշրջանում կամ այլուր, և, ի վերջո, նման կառավարվող ժողովրդավարություններին հատուկ շեղումները արդյունքում

կարող են հանգեցնել բռնության: ազդեցությունը պահպանելու լեգիտիմ ընթացակարգերի բացակայությունը, զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության և օրենքի գերակայության բացակայությունը գայթակհություններ և հրավերք են այնպիսի արկածախնդրության, որի ականատեսն ենք Չեչնիայում, Անդրդեստում և Կովկասում: Այս օրինակները վկայում են սևծովյան տարածաշրջանում առկա անվտանգության սկզբունքներից մեկի շեղումների մասին: Սակայն մյուսի տեսլականն ու ինտերցիան շարունակվում են, անկախ այն բոլոր դժվարություններից, որ դրա կողմնակիցները հանդիպեցին: Սակայն, ժողովրդավարությունը միայն քաղաքականության մշակման գործընթացի համար չէ անհրաժեշտ: Այն նաև արտաքին քաղաքականության եության մասն է: Հստակորեն սահմանված եվրոպական պետական կարգի և ակնհայտ «եվրոպական շահերի» բացակայության պայմաններում, որոնք ըստ եության կարող են բացահայտվել առավել տեղեկացված էլիտայի կողմից, այնպիսի քաղաքականության մշակման գործընթացը, որի արդյունքում կձևավորվի եվրոպական արտաքին քաղաքականություն, դառնում է եվրոպական արտաքին քաղաքականության եական բաղադրիչներից մեկը և դրա եության անբաժանելի մասը: Թեև սևծովյան տարածաշրջանի ամերին գոյություն ունեն մրցակցող անվտանգության երկու սկզբունքներ, պարզ է, որ միայն մեկն է առաջարկում եվրոպական ինտեգրման և անվտանգության կառուցման անավարտ գործընթացն ավարտելու որևէ հույս:

### Հայաստանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական գրասենյակի տնօրեն

Եթե հակիրճ պատասխանելու լինեմ համաժողովի կազմակերպիչների առաջադրած հարցին՝ կարող է արդյո՞ք ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (ԱԳԳԾ-IPAP) ծածկել Եվրոպական հարևանության ծրագրի անվտանգության «ճեղքվածքը», ապա պատասխանս կլինի դրական: Խոսքն այս դեպքում գնում է նախևառաջ պաշտպանական բարեփոխումների այն ծավալուն ծրագրի մասին, որը նախատեսված է ԱԳԳԾ-ով, և որի հիմնական նպատակն է Հայաստանի զինված ուժերը դարձնել ավելի պատրաստված ժամանակակից անվտանգության մարտահրավերներին դիմակայելու համար:

Առաջին հրապարակային ելույթները Հայաստանում պաշտպանական բարեփոխումների վերաբերյալ սկսվեցին 2005 թ. գարնանը, երբ Հայաստանի զինված ուժերի ղեկավարությունը հայտարարեց, որ ծրագրում է մինչև 2015թ. ստեղծել «21-րդ դարի պահանջներին համապատասխանող, նոր մարտահրավերներին դիմակայելուն պատրաստ ու հանրապետության ռազմական անվտանգությունը լիովին ապահովող բանակ»:

Ժամանակի ընթացքում, սակայն, սկսեց տպավորություն ստեղծվել, որ բարեփոխումների «խորքային վերլուծությունն» ու «աստիճանական բնույթը» արգելակում են բարեփոխումների ընթացքը: Ամեն դեպքում, մինչև ս.թ. մայիսը ռազմական բարեփոխումները այնքան էլ տեսանելի չէին:

Սակայն մայիսի 30-ին Հայաստանի պաշտպանության նախարարության կողմից հիստում պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանի ունեցած ելույ-

թը վկայեց, որ Չայաստանում պաշտպանական բարեփոխումներն այլևս առասպելական գործընթաց չեն:

Իր ելույթում պաշտպանության նախարարը հատուկ առանձնացրեց այն փաստը, որ հատուկ քաղաքացիական ծառայության են անցնելու մեծ թվով սպաներ, ովքեր իրենց վարչություններում և բաժիններում զբաղեցնում են զինվորական հաստիքներ:

Պաշտպանության նախարարը հիշեցրեց նաև, որ հատուկ քաղաքացիական ծառայության անցնելու գործընթացը մոտեցել է վերջին փուլին, և այդ համակարգը պետք է գործի ս.թ. նոյեմբերի 1-ից: «Այս խնդրին պետք է ցուցաբերել չափազանց նրբանկատ և ուշադիր մոտեցում, որպեսզի չանտեսվեն զինծառայողների իրավունքները: Անհրաժեշտ է օգնել նրանց հարմարվելու միանգամայն նոր և դեռևս ոչ լիովին հասկանալի ծառայողական կառույցի կայացմանը», - նշում էր պաշտպանական գերատեսչության ղեկավարը:

Նա նաև կոչ արեց «փոխել սեփական և ենթակաների հոգեբանությունը, որպեսզի բոլորը հասկանան ու համոզված լինեն, որ պաշտպանական բարեփոխումները մեզ համար անհրաժեշտություն են»:

Փաստորեն, այս ելույթն առաջինն էր վերջին երեք տարիների ընթացքում, որը պարունակում էր պաշտպանական բարեփոխումների իրական նկարագրություն՝ առանց ընդհանրացված մտքերի ու բարեմաղթանքների:

Չափազանց կարևոր գործոն էր նաև պաշտպանության նախարարի խոստովանությունն առ այն, որ բարեփոխումներն անխուսափելիորեն կհանգեցնեն համակարգի կողմից որոշակի ներքին հակազդեցության և լուրջ հոգեբանական փոփոխություններ կպահանջեն: Ներկայում բանակը երևի թե պետական միակ կառույցն է, որը փաստացիորեն վայելում է հայ հասարակության անվերապահ աջակցությունը՝ անկախ մարդկանց քաղաքական համակրանքներից: Դրա վկայություն կարող է հանդիսանալ այն փաստը, որ ս.թ. մարտի 1-ից 20-ը երևանում հայտարարված արտակարգ դրության ողջ ընթացքում զինծառայողների

ու քաղաքացիների միջև ոչ մի միջադեպ չգրանցվեց: Մյուս կողմից, չի կարելի հաշվի չառնել այն իրողությունը, որ ՀՀ շատ զինծառայողների համար ռազմական համազգեստն ու ուսադիրներում աստղերի առկայությունը եղել և մնում է որոշակի հատուկ կաստային պատկանելիության խորհրդանիշ, և այդ և բազմաթիվ այլ ատրիբուտներից գրկվելը լուրջ ցնցում կառաջացնի նրանց մոտ:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ պաշտպանական բարեփոխումների ակտիվ փուլի մեկնարկի մասին հայտարարվեց Հայաստանի իշխանությունների ու ընդդիմության քաղաքական չլուծված հակամարտության պայմաններում. ակնհայտ է, որ որքան խորը լինեն պաշտպանական բարեփոխումները, այնքան քիչ կլինեն բանակը որպես «ջոկեր» օգտագործելու գայթակղություններն ինչպես քաղաքական ուժերի, այնպես էլ զինվորական հագուստ կրող մարդկանց շրջանում:

Այն մասին, որ պաշտպանական բարեփոխումներն այլևս անշրջելի են, վկայում է այն, որ Հայաստանում սկսվել է Պաշտպանության ռազմավարական վերանայման (Strategic Defense Review-SDR) գործընթացը, որի անհրաժեշտությունը բխում է Ազգային անվտանգության ռազմավարությունից և ենթադրում է բարեփոխումների ամբողջական փաթեթի նախապատրաստում: Արդյունքում պետք է մշակվի այնպիսի փաստաթուղթ և դրանից բխող գործողությունների և միջոցառումների այնպիսի ծրագիր, որը կհամապատասխանի համընդհանուր և տարածաշրջանային անվտանգության ժամանակակից մարտահրավերներին:

Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքները հիմք կհանդիսանան ռազմական կարիքների որոշման և զինված ուժերի օպտիմալ կառուցվածքների երկարաժամկետ պլանավորման համար՝ հաշվի առնելով տնտեսական, ռազմաքաղաքական, ժողովրդագրական և այլ գործոնները:

և այսպես. Հայաստանում պաշտպանական բարեփոխումները ակտիվ փուլ են մտնում և այդ հանգամանքը ոչ միայն տեղական, այլ նաև տարածաշրջանային նշանակություն ունի: 2005թ. հոկտեմբերին հանդես գալով «Անվտանգություն Հարավային Կովկասում» սեմինարում՝ ՀՀ ներկայիս նախագահ, իսկ

այն ժամանակ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն ասում էր, որ Հարավային Կովկասի երկրներում ՆԱՏՕ-ի հետ համագործակցությամբ իրականացվող պաշտպանական բարեփոխումները պետք է միասնական գործընթացի բնույթ կրեն՝ տարածաշրջանի պետությունների ժողովրդավարացման ու զարգացման համատեքստում: Այսօր, ցավոք, չենք կարող խոսել այդպիսի միասնական գործընթացի առկայության մասին: Մյուս կողմից, սակայն նման լայնածավալ բարեփոխումների «միակողմանի» կերպով անցկացումը լավագույն կերպով հավաստում են Հայաստանի մտադրությունների լրջության և ՆԱՏՕ-ի և միջազգային այլ գործընկերների առջև ստանձնած պարտավորություններին հավատարիմ լինելու մասին:

*ԵԱՅԿ Երևանյան գրասենյակ,  
Քաղաքական-նազմական խորհրդատու*

Չարգելի տիկնայք և պարոնայք,

Ինձ խնդրել են խոսել Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՅԿ) դերի մասին Հայաստանին աջակցելու գործընթացում և այն մասին, թե կազմակերպությունն ինչպես կարող է նպաստել երկրի եվրոպական ինտեգրմանը ԵՅՔ շրջանակներում: ԵԱՅԿ-ն որպես կազմակերպություն ձևավորվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության համաժողովի (ԵԱՅՅ) հիման վրա, որը հանդիպումների մի շարք էր, որը հետևեց 1975թ. ստորագրված Զելսինկյան վերջնական ակտին: Այս ակտը Եվրոպային առաջնորդող հիմնարար փաստաթղթերից մեկն է, որը տեսլական է առաջարկում, թե ինչպես պետք է պետությունները վարվեն իրենց սահմաններից ներս և դուրս: Այն կարելի է համարել ՄԱԿ-ի կանոնադրության տարածաշրջանային համարժեքը: ԵԱՅԿ-ն փոխհամաձայնության վրա հիմնված կազմակերպություն է, իսկ նրա համաձայնությունները ոչ թե իրավական, այլ բարոյական ուժ ունեն: Այդուհանդերձ, երկրների մեծամասնության կողմից իրենց գործընկերների կողմից կայացված համաձայնագրերից հրաժարվելը կոդիտարկվի որպես անընդունելի վարքագիծ և նրանց համար դժվար կլինի բացատրել, թե ինչու, օրինակ, տաս տարի առաջ ստորագրված փաստաթղթերը այլևս ճիշտ չեն: Եթե հաշվի առնենք այլ եվրոպական կազմակերպությունները ևս, ապա պետք է նշել, որ առկա է թե՛ աշխատանքի բաժանում, թե՛ մասնակի համընկնում ՆԱՏՕ-ի, Եվրոպայի խորհրդի, ԵԱՅԿ-ի և Եվրոպական միության կողմից գործադրվող ժողովրդավարացման ջանքերում: Հայաստանի հետ ՆԱՏՕ-ի հարաբերությունները սահմանված են Անհատական գործակցության գործողությունների ծրագրով: Եվրոպայի



խորհրդի աշխատանքը հիմնականում միտված է մարդու իրավունքների պաշտպանությանը և ամրագրված է մի շարք կարևոր, պարտավորեցնող պարտականություններով, պայմանագրերով և խորհրդարանական համաժողովի որոշումներով: Եվրոպական միությունն աշխատում է իր Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում և դրան առնչվող Գործողությունների ծրագրերի միջոցով: Բոլոր այս քաղաքականությունները և փաստաթղթերը մի շարք պարտավորություններ են ենթադրում, որոնք համընկնում են ԵԱՀԿ-ի պարտավորությունների հետ, ինչն իրականում հիանալի է: Թեև ԵԱՀԿ-ն իրավականորեն պարտավորեցնող պարտականություններ, առաջընթացի վերաբերյալ տարեկան հաշվետվություններ կամ վերջնաժամկետներ չի պարտադրում, այն մի քանի առավելություններ ունի, որոնք առանձնացնում են այս կազմակերպությունը վերոհիշյալների շարքում և այդ առավելությունները կարող են օգտակար լինել այն երկրների կառավարությունների և հասարակական կազմակերպությունների համար, որտեղ ԵԱՀԿ-ն իր ներկայացուցչությունն ունի:

ԵԱՀԿ-ի ամօրյա գործնական աշխատանքները համակարգվում են Կիեննայում գտնվող դեսպանների կարգավիճակ ունեցող Մշտական խորհրդի կողմից: Կարևորագույն քաղաքական պարտականությունները, ինչպես նաև նոր ուղղությունները, քննարկվում են ամենամյա Նախարարական հանդիպումների ընթացքում, որոնք տեղի են ունենում տարվա վերջում, ինչպես նաև երբեմն հրավիրվող վեհաժողովներում, որոնցից վերջինը տեղի ունեցավ 1999թ.: 2000թ. ի վեր ԵԱՀԿ-ն իր առաքելության գրասենյակներ է բացել Բալկանյան, Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներում: Այս առաքելությունները գործում են ամեն տարի երկարացվող մանդատով, որը բավականին ընդգրկուն է: Սա և մի շարք այլ կառավարման մեխանիզմներ ԵԱՀԿ-ին եզակի ճկունության հնարավորություն են ընձեռում, որի մասին ավելի մանրամասն կխոսեն ստորև:

Հայաստանում ԵԱՀԿ-ն թերևս առավել հայտնի է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման իր միջնորդության փորձերով: Այս խնդրով զբաղվում է այս հակամարտության խնդիրներով զբաղվող ԵԱՀԿ գրասենյակի գործող Նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակը, ինչպես

նան երեք համանախագահները, որոնց մանդատը միանգամայն տարբեր է երևանում ԵԱՀԿ գրասենյակի մանդատից:

ԵԱՀԿ-ն անվտանգության խնդիրներին անդրադառնում է երեք տեսանկյունից, որոնք հիմք են հանդիսանում նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ստորաբաժանումների համար: Առաջին հարթույթը, որը ներկայացնում են Ես, Քաղաքական-ազգային բաժինն է: Ինչ վերաբերում է վստահության և անվտանգության կառուցման միջոցառումներին, ինչպիսիք են սպառազինության կառավարումը և վաղ նախագգուշացումը, դրանք համակարգվում են կենտրոնացված կարգով Վիեննայում գտնվող Քարտուղարության կողմից: Երևանյան գրասենյակը, համագործակցելով Հայաստանի կառավարության հետ, հիմնականում զբաղվում է զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ամրապնդման, քաղաքականության մշակման և իրականացման բարելավման, վերապատրաստման և կազմակերպված հանցագործության և ահաբեկչության դեմ պայքարի խնդիրներով:

ԵԱՀԿ գործունեության երկրորդ ոլորտը այսպես կոչված տնտեսական և բնապահպանական հարթույթն է, որը վերաբերվում է շուկայական տնտեսության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն և բնապահպանական չափանիշների վերաբերյալ գիտակցության բարձրացման և դրանց կիրառման խնդիրներին: Այս ոլորտում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի գործունեության կարևոր օրինակներից է Օրհուս կենտրոնների համացանցի ստեղծումը ողջ Հայաստանի տարածքում, որի նպատակն է բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը բնապահպանական խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև խրախուսել հանրային մասնակցությունը այս խնդիրների շուրջ արդարությանը վերաբերող հարցերում:

ԵԱՀԿ երրորդ հարթույթը վերաբերվում է մարդու իրավունքների պաշտպանության չափանիշներին: Երևանյան գրասենյակը բավականին ակտիվ է այս ոլորտում և իրականացնում է ավելի քանի քսան ծրագիր՝ սկսած Հայաստան վերադարձած միգրանտների իրավիճակի ուսումնասիրությունից մինչև մարդու իրավունքների պաշտպանության չափանիշների մշակումն ու ավագ դպրոցում

քաղաքացիական կրթությունը: Իհարկե, այս համատեքստում չենք կարող չի-  
շատակել նաև ՄԻԺԻ մասին, որը հայտնի է ընտրությունների մոնիտորինգի իր  
ամաքելություններով, սակայն միևնույն ժամանակ խորհրդատվություն է տրա-  
մադրում իրավական նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև աշխատանքներ  
է իրականացնում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպա-  
նության, թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտներում, որոնք նրա գործունեությ-  
ան շրջանակը ներառող ասպարեզներից մի քանիսն են միայն: Ղեկավարվելով  
Վարչավայից՝ այն բավականին լայն ազատություն ունի ամաչանահերթություն-  
ներն ինքնուրույն սահմանելու համար, գոնե ներկայում:

Ինչ վերաբերվում է ԵԱԿ և ԵՅՔ կապին, թույլ տվեք սկսել՝ շեշտելով, որ ԵԱԿ և  
ԵՄ ընդհանուր արժեքներ ունեն: Չեմ կարող հիշել ժողովրդավարացման խնդիր-  
ներին վերաբերող որևէ ասպարեզ, որտեղ այս երկու կազմակերպությունների  
միջև հակասություն ամաչանա այն հարցի շուրջ, թե ինչ է անհրաժեշտ անել:  
Իրականում կարծում եմ, որ այն ժողովրդավարացման ծրագրերը, որ այս կազ-  
մակերպությունները կարող էին իրականացնել Հայաստանում, ըստ Եության  
համարժեքորեն փոխարինելի են: Այդ իսկ պատճառով, Հայաստանում ԵԱԿ յու-  
րաքանչյուր նվաճում նպաստում է երկրի եվրոպական ինտեգրմանը: Սա պայմա-  
նավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի ԵՅՔ Գործողությունների  
ծրագրի գերակա ոլորտներից ամաչինը և երկրորդը, որոնք վերաբերվում են  
մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարացման գործընթա-  
ցին, հիմնվում են այս ոլորտներում ԵԱԿ չափանիշների վրա:

Մի քանի ամավելություններ կան, որոնք ԵԱԿ-ն ամանձնացնում են մի շարք  
այլ կազմակերպություններից: Ֆինանսական տեսանկյունից կարելի է ասել,  
որ կազմակերպությունը և հատկապես դրա տարածքային ամաքելությունները  
իրենց իրավասության տակ ծրագրեր իրականացնելու ավելի շատ ռեսուրսներ  
ունեն, քան Եվրոպայի խորհուրդը, թեև, իհարկե, դրանք ավելի քիչ են, քան Եվ-  
րոպական միության ֆինանսական ռեսուրսները: Սակայն, ԵԱԿ տարածքային  
ամաքելություններն ավելի ճկուն են, քան ԵՄ-ն, գերակայությունների սահման-  
ման և դրանց փոփոխության հարցում: Մեկ այլ ամավելություն է նաև այն հան-  
գամանքը, որ ԵԱԿ 18 տարածքային ամաքելությունները՝ ներառյալ երևանյան

գրասենյակը, բավականին լայն մանդատ ունեն, որում պարզորոշ սահմանվում է, որ գրասենյակը գտնվում է տվյալ երկրում վերջինիս օժանդակելու համար, որպեսզի այն կատարի ԵԱՀԿ առջև ստանձնած իր պարտավորությունները բոլոր վերոհիշյալ հարթույթներում: Այդ իսկ պատճառով բոլոր գրասենյակները բավականին ճկուն են և, ի հավելումն, բավականին մեծ ինքնավարություն ունեն իրենց ծրագրերի և բյուջեների պլանավորման հարցում: Ավելին, առաքելությունների մեծամասնությունը աշխատանքի է հրավիրում մեծ թվով տեղացիների, որոնք իհարկե մեծապես ծանոթ են տեղական պայմաններին և կարող են լավագույնս օգտակար լինել գրասենյակի գործունեությունը առավելապես ներքին կարիքներին հարմարեցնելու և հնարավորինս արդյունավետ դարձնելու հարցում:

Ինչպես ցանկացած կազմակերպության դեպքում, ԵԱՀԿ ուժեղ է այնքանով, որքանով իր մասնակից պետությունները շահագրգռված են դրանում, մինչդեռ վերջին ժամանակներում որոշ մասնակից պետությունների կողմից հարցականի տակ են դրվում կազմակերպության ինստիտուտների և տարածքային գրասենյակների մեծամասնության անկախությունն ու ճկունությունը: Այս պետությունները ցանկանում են տեսնել Քարտուղարության և Մշտական խորհրդի դերի ամրապնդում: Տարածքային առաքելությունների մանդատը նորոգվում է ամեն տարի՝ հնարավորություն տալով անբավարարված երկրին որոշակի փոփոխություններ անել: Մինևույն ժամանակ, հաճախ բացակայում է նոր նախաձեռնությունների շուրջ փոխհամաձայնությունը, որը խանգարում է հետագա զարգացմանը և ԵԱՀԿ պարտավորությունների կատարմանը: Վերջին անգամ Նախարարական խորհուրդը համատեղ հայտարարության մասին համաձայնության է եկել 2002թ.:

Չնայած այս դժվարություններին, որոնք հատուկ են նման բազմաանդամ և փոխհամաձայնության սկզբունքի վրա հիմնված կազմակերպություններին, այնուամենայնիվ դեռևս գոյություն ունի բավականին հզոր մի պատճառ, որն արդարացնում է ԵԱՀԿ գործունեությունը, իսկ ԵԱՀԿ երևանյան գրասենյակն, ըստ էության, վերջին մի քանի տարիների ընթացքում բավականին ընդլայնվել է՝ թե՛ ֆինանսապես, թե՛ աշխատակազմի թվի առումով: Մեզ երկու տեսանկյունից էլ

ավելի շատ ռեսուրսներ են պետք Հայաստանում բոլոր ուժերի հետ աշխատելու համար, որը թույլ կտա կոնկրետ նվաճումներ արձանագրել, իսկ 2008թ. այս տեսակետից չի կարելի համար լավագույն ժամանակաշրջանը: Կարծում եմ, բոլորն էլ կփաստեն այս մասին:

Ընդհանուր առմամբ, երբ խոսք է գնում նվաճումների և արդյունքների մասին, անմիջապես անդրադարձ է կատարվում քաղաքական կամքին: Որևէ կազմակերպության ինտեգրայից կամ որևէ ծրագրի նպատակահարմարությունից անկախ՝ միշտ դժգոհություններ կան, որոնք վերաբերում են քաղաքական կամքին. կամ այն գրեթե աննշան է կամ լիովին բացակայում է: Բարեփոխման, նոր, առավել արդյունավետ կերպով գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ քաղաքական կամքի ձևավորման համար պետք է պատրաստ լինել փոփոխության: Մտածելակերպի նման փոփոխության կարելի է հասնել միայն հնարավորին չափ լավ ծրագրերի իրականացման արդյունքում, որոնք ցույց կտան և կներմուծեն գործունեության նոր եղանակներ, սակայն սա պահանջում է նաև, որ նրանք, ում համար նախատեսված են այդ փոփոխությունները, լինեն բաց՝ ընդունելու և ընկալելու դրանք: Անհրաժեշտ է, որ կառավարությունը բաց լինի, որպեսզի կարողանա ճանաչել և օգտվել այն հնարավորություններից, որոնք ընձեռնված են իր ինստիտուտները բարեփոխելու և բոլորի համար կյանքը բարելավելու համար:

Արձագանքող պետությունից դեպի նախաձեռնող պետություն կոփոխությունը խիզախություն և ապագայի տեսլական է պահանջում: Այստեղ կցանկանայի վերափոխել Մարկ Տվենի այն արտահայտությունը, որ մենք օգտագործում ենք ուստիկանության կրթության զարգացման ծրագրում. «Եթե դու միշտ մտածում ես այն, ինչ միշտ մտածել ես և շարունակում ես անել այն, ինչ միշտ ես արել, ապա արդյունքում կունենաս այն, ինչ միշտ ունեցել ես»: Պարզ է, որ Հայաստանն ավելիին է արժանի, և ես հուսով եմ, որ նրա առաջնորդները կշարունակեն դեպի եվրոպական չափանիշներն ուղղորդող բարեփոխման ճանապարհը:

Շնորհակալություն:

*Օրենսդրական նախաձեռնությունների  
գործակալության ԵՄ հարցերով փորձագետ,*

*Ուկրաինա*

Պետության ժողովրդավարական զարգացման խթանումը, որը դիտարկվում է որպես ժողովրդավարական ամբողջականացման գործընթաց, բարդ և բազմամակարդակ երևույթ է: Նախ, այն պետք է ներառի պետության զարգացման ռազմավարական տեսլականը, որը պետք է համապատասխանի ժողովրդավարական չափանիշներին, որոնք հնարավոր է իրականացնել իրավական շրջանակներում: Երկրորդ, այդ գործընթացի անհրաժեշտ նախապայման է համապատասխան բարեփոխումներ իրականացնելու համար քաղաքական կամքի առկայությունը, որը պետք է արդյունավետ և օրինական լինի: Այդուհանդերձ, ժողովրդավարական ամբողջականացման եռությունը սահմանելու նպատակով ընթացակարգային խնդիրների շեշտադրումն ամբողջական չէ, քանզի այս հասկացությունը կարող է օգտագործվել նաև կառավարման որոշակի որակ բնութագրելու համար, որակ, որը թույլ է տալիս ապահովել քաղաքական համակարգի կայունությունը և դրա հիմքերի համապատասխանությունը ժողովրդավարական չափանիշներին:

Այսպիսով, ամբողջականացված ժողովրդավարությունը, որպես քաղաքական կարգի պայման, կարող է դիտարկվել որպես պետության գործունեության մեջ ժողովրդավարական արժեքների ամրագրման արդյունք: Միևնույն ժամանակ, ժողովրդավարական ամբողջականացումը՝ որպես նման արժեքների ինտեգրում քաղաքական համակարգի մեջ, պահանջում է արդյունավետ խտիտումների ձևավորում, որի նպատակն է լինելու միավորել ընդհանուր ժողովրդավարական «խաղի կանոնները» և նպաստել դրանց կենսունակությանը, իհարկե, որոշակի իրավական և քաղաքական դաշտի սահմաններում:

Միջազգային հանրության, մասնավորապես ԵԱՀԿ և Եվրոպայի խորհրդի, դիրքորոշումը աշխարհում ժողովրդավարության զարգացման վերաբերյալ կարելի է ամփոփել որպես կայացած ժողովրդավարական արժեքների խրախուսում հասարակական և պետական բոլոր հարթույթներում (քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և այլն): Սա բացատրում է գործողությունների թիրախների ընտրությունը, թե ինչու են դրանք ճանաչվել որպես առաջնահերթություններ, հատկապես մարդու իրավունքների պաշտպանությունը, օրենքի գերակայության սկզբունքի հաստատումը, տարբեր ոլորտներում բարեփոխումների իրականացումը և անդրադարձը Եվրոպական միության մարտահրավերներին: Ընդհանուր առմամբ, ԵԱՀԿ և Եվրոպայի խորհրդի կողմից խրախուսվող արժեքները ստիպում են ամրապնդել ժողովրդավարական ամբողջականացման սկզբունքները: Սակայն, տարբեր պետությունների կողմից ստանձնած պարտականությունների հաջող իրականացումը կախված է մի շարք քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և պատմական գործոններից, որը նշանակում է, որ գոյություն ունեն ժողովրդավարական ամբողջականացման համընդհանուր մեխանիզմներ: Այդուհանդերձ, ժողովրդավարական կառավարման սկզբունքների հաստատումը հիմնված է արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգի զարգացման վրա, քանզի այս քաղաքիչը հնարավորություն է ընձեռում ամրագրել կարգի կայունությունն ու շարունակելիությունը:

Ուկրաինան, որպես հետխորհրդային պետություն, մի շարք խնդիրներ ունի, որոնց լուծումները կարևոր են նրա հետագա քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման համար: Խորհրդային ժառանգությունը, որը բնութագրվում էր թերզարգացած քաղաքական կուսակցությունների համակարգով, Էլիտաների փոփոխության թափանցիկ համակարգի և ազդեցության տարբեր կենտրոնների միջև իշխանության արդյունավետ բաշխման բացակայությամբ, բավականին բարդացրել է պետության նոր պայմաններին հարմարվելու գործընթացը: Առկա բարդություններին արձագանքելու ընթացքում հիմնական առաջնահերթությունը դարձավ քաղաքական ինստիտուտների լայնածավալ բարեփոխումը, որի նպատակն է քաղաքական կարգի արդյունավետության ամրագրումը՝ ըստ ժողովրդավարական չափանիշների: Որակական առանձնահատկությունների տեսանկյունից Ուկրաինայի ներկա քաղաքական զարգացու-

մը կարելի է սահմանել ժողովրդավարական ամբողջականացման տեսության շրջանակներում: Մինևույն ժամանակ, դեռևս չլուծված խնդիրների առկայությունը վկայում է ընտրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ բարեփոխումների շարունակության անհրաժեշտության արդիականության մասին:

2006թ. սահմանադրական փոփոխությունները Էականորեն ձևափոխել են ուկրաինական քաղաքական համակարգը: Որոշումների կայացման համակարգի առանցքի փոփոխության, ներկայացուցչական իշխանությունների ձևավորման համար կիրառված մեթոդի, ինչպես նաև պետական իշխանությունների համակարգում վերահսկման լծակների բաշխման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել ոչ միայն նոր ձևաչափեր փնտրել քաղաքական ուժերի միջև համագործակցությունն ապահովելու համար, այլև հաղորդակցության նոր եղանակներ կիրառելու համար, որպեսզի նման համագործակցության կանոնների և հետևանքների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվի:

Դժբախտաբար, 2006-2008թթ. քաղաքական ճգնաժամը ցույց տվեց ուկրաինացի քաղաքական գործիչների համաձայնության հասնելու ունակության ցածր մակարդակը: Մյուս կողմից, սա կարելի է բացատրել քաղաքական կուսակցությունների գաղափարախոսությունների և ծրագրերի մասնատված դերով, որը բացառում է փոխզիջումների համար անհրաժեշտ հիմքը, ինչպես նաև քաղաքականության մշակման եղանակների ընդհանուր սահմանումը: Սակայն, կա նաև անձնական կամ կորպորատիվ շահը հանրային շահից վեր դասելու տխուր գործոնի հանգամանքը: Սա նոր, ավելի մեծ ջանք է պահանջում Ուկրաինայում ժողովրդավարության ամբողջականացման համար, որպեսզի պահպանվի ինստիտուցիոնալ կարգի կայունությունը, ինչպես նաև գնահատվի քաղաքակիրթ քաղաքական մշակույթը թե՛ քաղաքական էլիտայի, թե՛ քաղաքացիների կողմից:

Վերջին տարիներին ԵԱՀԿ-ն և Եվրոպայի հորիզորդը մի շարք ծրագրեր և միջոցառումներ են հովանավորել ուկրաինական քաղաքական գործիչներին արևմտաեվրոպական արժեքներին ծանոթացնելու նպատակով: Ավելին, այս կազմակերպությունները կանոնավոր կերպով մասնագիտական գի-



տելիք և հմտություններ են տրամադրում ուկրաինական օրենսդրությունը ժողովրդավարական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով, ինչպես նաև առաջարկում են օտարերկրյա փորձից օգտվելու եղանակներ: Նախաձեռնությունների մեծամասնության նպատակը պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև երկխոսության հաստատմանն էին միտված: Սակայն, անհրաժեշտ բարեփոխումները հաճախ բախվում են պետական պաշտոնյաների մոտ քաղաքական կամքի բացակայությանը, որը վկայում է այն մասին, որ քաղաքական էլիտաները պատրաստ չեն կառուցողական երկխոսության՝ այսպիսով ժողովրդավարական ամբողջականացումը զրկելով այս կարևոր բաղադրիչից:

Վերոհիշյալ խնդիրը պարզաբանող պատճառներից մեկն այն է, որ համընդհանուր (և այսպիսով միանգամայն նոր) խաղի կանոններ ստեղծելու միտքն առաջացավ միայն 1990-ականների վերջերին: Ժողովրդավարության կայունության հիմք հանդիսացող ինստիտուտների հավասարակշռված համակարգի ստեղծման փորձերը հնարավոր դարձրեցին հասկանալ և գիտակցել պետության մեջ էական ժողովրդավարական ձևափոխությունների ողջ բարդությունը: Այդ իսկ պատճառով, Ուկրաինայում ժողովրդավարության հաստատման գործընթացում ինստիտուցիոնալացման դերը կարելի է համարել կարևորագույնը: Սա նշանակում է, որ Ուկրաինայում ժողովրդավարական ամբողջականացման ուսումնասիրության մեթոդաբանական շրջանակը պետք է գծագրվի դրա ինստիտուցիոնալ բաղադրիչի ուսումնասիրության հիմքի վրա: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են

- ա. կառավարության ձևի ընտրությունը,
- բ. էլիտայի ռոտացիայի տրամաբանությունը և այդ գործընթացում ընտրությունների դերը,
- գ. քաղաքական կուսակցությունների զարգացման առանձնահատկությունները:

Երկրում պետական կառավարման համակարգի բարեփոխմանն ուղղված՝ 2006թ. Ուկրաինայում սահմանադրական բարեփոխումների նպատակը ացնումն էր

կառավարման խառը համակարգից խորհրդարանական հանրապետության ձևաչափին: Սա իր հերթին նախատեսում էր Ուրկախնայում պետական մարմինների միջև իշխանության այնպիսի վերաբաշխում, որը թույլ կտար նվազեցնել երկրի նախագահի կշիռը որոշումների կայացման գործընթացում: Հիմնական քայլերն ուղղված էին խորհրդարանին (ավելի ճիշտ, խորհրդարանական մեծամասնությանը) պետական պաշտոնների մեծամասնությունում նշանակումներ կատարելու իրավասություն տրամադրելուն, ինչպես նաև գործադիր իշխանության երկատվածության դեմ պայքարելուն՝ կառավարությանը տրամադրելով իշխանության ցածր մակարդակների նկատմամբ վերահսկողության ողջ իրավասությունը: Ենթադրվում էր, որ սահմանադրական փոփոխությունների մեկ այլ կարևոր հատված ներառելու էր տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները, որոնք պետք է ամրագրեին տեղական ինքնակառավարման եվրոպական կանոնակարգի սկզբունքները: Հայտարարված նպատակները միանգամայն համընկնում էին բռնատիրությունից ժողովրդավարության անցման տեսականորեն հիմնավորված տրամաբանության հետ, որը նախատեսում է կենտրոնացված կառավարման (նախագահական հանրապետության) Եվրոլուցիոն փոխարինումը մի մոդելով, որտեղ ավելի գերիշխող դեր ունի ներկայացուցչական իշխանությունը՝ օրենսդիրը:

Ուրկախնայում սահմանադրական բարեփոխման առաջին Էական սխալը այն բարենպաստ պայմանների ստեղծումն էր, երբ հնարավորություն ընձեռվեց խորհրդարանը փոխարինել խորհրդարանական մեծամասնությամբ: Սահմանադրությունը սահմանում է միայն խորհրդարանական մեծամասնության կարգավիճակը, մինչդեռ մեծամասնության մեջ չմտնող խորհրդարանականների կարգավիճակը սահմանադրորեն սահմանված չէ: Համապատասխան սահմանադրական հիմքի և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ժողովրդավարական փորձի բացակայության պայմաններում սա կարող է նախապայմաններ ստեղծել քաղաքականության մշակման գործընթացից փոքրամասնությունը ներկայացնող պատասխանատու անձանց դուրս մղելու համար:

Սահմանադրական բարեփոխումների ընթացքում կատարված սխալների մեկ այլ մեծ շերտ վերաբերվում է այդ փոփոխությունների անկարողությանը՝ ապահովելու իրավասությունների և պարտականությունների հավասարակշռված և ադյունավետ բաշխումը կառավարության համակարգում: Ուկրաինական գործող օրենսդրությունը սահմանում է, նախևառաջ, տեղական ինքնակառավարման երկակի բնույթը, և երկրորդ, տեղական իշխանությունների երկակի ենթակայությունը: Մարզային քաղաքականության արդյունավետությանը սպառնացող ամենակնհայտ վտանգը իշխանության մարմինների թիվն է, որոնց պետք է հաշվետու լինեն տեղական ինքնակառավարման մարմինները: Ինչ վերաբերում է պատվիրակված լիազորությունների մասով իշխանության ներկայացուցչական մարմնի առջև պատասխանատու լինելուն, պետք է նշել, որ չնայած այն տեղական խորհուրդները չունեն իրենց գործադիր ստորաբաժանումները, այնուամենայնիվ այդ նորմը չափազանց տրամաբանական է: Ինչ-ևէ, պետության ղեկավարի և կառավարության մրցակցությունը տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի վրա ազդեցություն ձեռք բերելու առումով պարադոքս է: Թեև սահմանադրական բարեփոխման նպատակը նախագահի և կառավարության միջև ազդեցության ոլորտների բաշխումն էր, նախագահը դուրս չմնաց տեղական ինքնակառավարման գործադիր մարմինների ձևավորման և վերահսկման գործընթացից: Այն մոդելը, ըստ որի նախարարները հաշվետու են խորհրդարանին, իսկ «օբլաստների» և «ռայոնների» ղեկավարները՝ նախագահին, հանգեցնում է գործադիր ճյուղի ուղղահայացի հատմանը: Այս հատումը հատկապես ակնհայտ դարձավ, երբ 2006թ. խորհրդարանական ընտրություններից հետո մեկ տարվա ընթացքում արձանագրվեցին մի շարք դեպքեր, երբ «ռայոնների» խորհուրդները իրենց անվստահությունը հայտնեցին մարզային կառավարությունների ղեկավարներին, իսկ նախագահը վերջիններիս չհեռացրեց իրենց պաշտոններից՝ ելնելով սեփական քաղաքական նկատառումներից: Այս իսկ պատճառով, գործադիրի երկակի բնույթի պահպանումը դիտարկվում է որպես սահմանադրական բարեփոխումների ամենամեծ թերություններից մեկը:

Ուկրաինական սահմանադրական համակարգի նոր մոդելի վերոնշյալ թերությունները ուղղակի ազդեցություն ունեն ժողովրդավարական ամբողջականաց-

ման գործընթացների վրա, քանի որ դրանք կապված են ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորման հետ, որը սահմանում է քաղաքական համակարգի համար պաշտոնական խաղի կանոնները: Մի կողմից, դրանք սահմանում են հզոր մի ռեսուրսի ծավալը, որը տրվում է որոշակի պաշտոնյայի (օրենքով սահմանված իրավասություններ, ենթակա բաժինների թիվ և ուժ, շահարկման հնարավորություններ և այլն), իսկ մյուս կողմից, դրանք հիմք են հանդիսանում պետությունում իշխանության տարբեր կենտրոնների միջև հավանական առճակատման համար, որը կարող է հանգեցնել խաղի ժողովրդավարական կանոնների անտեսմանը: Նման անկայուն և անարդյունավետ պայմաններում ժողովրդավարական վարքագծի կայացումը քաղաքական կյանքի մասնակիցների արժեքների և կարծիքների առումով բավականին խնդրահարույց է թվում:

Այսպիսով, Ուկրաինայի օրինակն ապացուցում է, որ որևէ կառավարման համակարգի ընտրությունը որպես այդպիսին չի երաշխավորում ժողովրդավարական ամբողջականացում: ԵԱՀԿ և Եվրոպայի խորհրդի կողմից քաջալերվող արդյունավետ կառավարման տարբերակը նախատեսում է ոչ միայն կառավարման մարմինների որոշակի կառուցվածք, այլև դրա փոխարինումը կայուն և ժողովրդավարական կանոններով, որոնք հաստատվելու են այդ մարմինների գործունեությունն ապահովելու համար, այսինքն, պատշաճ իրավական կանոնակարգում, որը թույլ կտա կիրառել իշխանության տարանջատման և հավասարակշռման սկզբունքները:

Ժողովրդավարական ամբողջականացման մեկ այլ կարևոր խնդիր է Ուկրաինայում Էլիտաների ռոտացիայի առանձնահատկությունը: Ներկայում նման ռոտացիայի հիմնական շահագրգռող գործոնը իշխանական առաջնորդների վախն է հայտնվելու ընդդիմությունում, որը հատուկ է նաև ժողովրդավարական աշխարհին: Ուկրաինական քաղաքական գործիչների համար ամենամեծ սպառնալիքը իշխանության կորուստն է որպես այդպիսին, քանի որ դա սահմանափակում է այլ դիվիդենտների մատչելիությունը, ինչպիսիք են բիզնես եկամուտը, կարգավիճակին հատուկ առավելությունները և այլն: Այս համատեքստում արժի դիտարկել Ուկրաինայում ընտրությունների որակը: Իրավական տեսանկյունից այս պահին չի թվում, թե ուկրաինական ընտրական հա-

մակարգն ի վիճակի է գործել որպես լիարժեք և արդար մեխանիզմ, որը կարող է արտացոլել քաղաքացիների շահերը: Եթե որպես արդար և թափանցիկ ընտրությունների մոդել վերցնենք ԵԱԿԿ և Եվրոպայի խորհրդի չափանիշները, ակնհայտ է դառնում, որ Ուկրաինական օրենսդրությունը մի շարք թերություններ ունի: Եական թերությունները հետևյալն են. Նախընտրական քարոզարշավների իրավական կանոնակարգման համախմբումը և ընտրության մասին օրենքի կայունության ապահովումը, անկախ թեկնածուների մասնակցությունը, ընտրության ազատությունը, համամասնական ընտրական համակարգի անձնավորումը, համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի կանոնների պահպանումը, կենտրոնական ընտրական վարչական մարմնի (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի) ձևավորման ընթացակարգի փոփոխությունը, ընտրական գործընթացին մամուլի մասնակցության վերաբերյալ բարելավված կանոնակարգը և այլն: Այսպես, պետք է հրաժարվել այս կամ այն կանոնավոր կամ ընտրություններից անմիջապես առաջ ընտրական օրենսդրության փոփոխության ոչ ժողովրդավարական պրակտիկայից: Քաղաքացիների ինքնաառաջադրման կամ ինչ-որ խմբում որպես թեկնածուներ նրանց համախմբման համար անհրաժեշտ է օրենսդրական մեխանիզմ: Նպատակահարմար է խուսափել երկրից բացակայողների և արտերկրից ընտրություններին մասնակցելու նպատակով ժամանած քաղաքացիների ընտրության հետ կապված խնդիրներից: Խորհրդարանում չներկայացված քաղաքական կուսակցությունները պետք է ավելի լայն ընտրական իրավունքներ ստանան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չպետք է ձևավորվի քաղաքական սկզբունքների հիման վրա: Ուկրաինական ընտրական օրենսդրության այս թերությունները հանգեցնում են Ուկրաինայում էլիտաների փակ շրջանի և խրախուսում են դրանց նորացումը բացառապես ներքին ներուժի միջոցով:

Վիճելի է, թե արդյոք ժողովրդավարությունը կարող է գոյատևել առանց կայուն քաղաքական կուսակցական համակարգի: Ինչ վերաբերում է Ուկրաինային, այնտեղ գերակշռում է քաղաքականության անձնավորված մոտեցումը: Արդյունքում քաղաքական դաշտի և ընտրական նախասիրությունների կառուցման գործընթացում նվազում է գաղափարախոսության դերը: Այլախոս քաղաքական համակարգի հակառակ երեսը, որը Նարնչագույն հեղափոխության արդ-

յունքն էր և արտահայտվեց մի շարք ուժեղ քաղաքական ուժերի ձևավորմամբ, քաղաքականության անձնավորումն է և դրա արդյունքում քաղաքական կուսակցությունների թուլացումը: Մինչև 2004թ. անհավասարակշռված քաղաքական համակարգի պատճառներից մեկը նախագահական իշխանության այսպես կոչված «ապակուսակցականացումն» էր, որը հիմնված էր սահմանափակ մենաշնորհային շրջանակի աջակցության վրա: Նարնջագույն հեղափոխությունից հետո ազդեցության կենտրոնների թիվը զգալիորեն աճել է, իսկ հզոր քաղաքական գործիչները ձգտում են հենվել քաղաքական կուսակցությունների վրա: Սակայն վերջիններս դեռևս շարունակում են կախված մնալ իրենց առաջնորդների դիրքից և հեղինակությունից: Արդյունքում ընտրությունները վերածվել են խոստումների շքերթի և ռեսուրսների մրցավազքի՝ այդպիսով միանգամայն կորցնելով քաղաքացիների շահերի արտահայտման իրենց գործառնությունը:

Այսօր որևէ քաղաքական ուժին աջակցելու սահմանը կախված է նրա առաջնորդի հեղինակությունից և ընտրական գրավչության աստիճանից: Այս միտման բացասական կողմերն առաջանում են հիմնականում ուկրաինական հասարակության քաղաքական կառուցվածքի ձևավորման և մասնակցության քաղաքական մշակույթի զարգացման գործընթացների դանդաղ ընթացքի արդյունքում: Ինչ-որ անհատի շուրջ համախմբումը հաճախ հանգեցնում է բազմաթիվ ընտրական նախագծերի ի հայտ գալուն, որոնց նպատակն է իրենց առաջնորդի հեղինակության բարձրացումը, ինչպես նաև գիտակցաբար կամ անգիտակցաբար ընտրազանգվածի ուշադրության շեղումը խոշոր քաղաքական կուսակցություններից:

Վերոհիշյալ գործընթացները հանգեցնում են պետության քաղաքական համակարգում քաղաքական կուսակցությունների հեղինակության և դերի անկմանը: Այսօր քաղաքական կուսակցությունները չեն կարող դիտարկվել որպես քաղաքացիների շահերի լիարժեք արտահայտողներ: Ավելին, հաճախ դրանց ընտրացուցակներում կան մարդիկ, որոնց անդամակցությունն այդ կուսակցությանը ոչ մի զաղափարախոսական հիմք չունի և թերևս թելադրված է իրենց սեփական բիզնես շահերը պաշտպանելու կամ դրանք առաջ տանելու ցանկությամբ (նման միտումը մասնավորապես համառորեն է դրսևորվում տեղական ներկայացուց-

չական համակարգում): Այսպիսով, քաղաքականության հանդեպ անձնավորված մոտեցումը և քաղաքական կուսակցությունների թուլությունը ուկրաինական քաղաքական համակարգի այն հիմնական մեթոդաբանական խնդիրներն են, որոնք Եական ազդեցություն են ունեցել տարածաշրջանում քաղաքական գործընթացների վրա:

Բացի համակարգային խնդիրներից, ԵԱՀԿ և Եվրոպայի խորհուրդը շեշտում են նաև այն հանգամանքը, որ ուկրաինական ամենամեծ քաղաքական կուսակցությունները պետք է բարելավեն ներկուսակցական ժողովրդավարության մակարդակը: Դրանց մեծամասնության ոչ թափանցիկ գործունեությունն ի հայտ է գալիս այնպիսի երևույթներում, ինչպիսիք են ընտրությունների ժամանակ թեկնածուների ոչ հստակ առաջադրումը, քաղաքական դաշնակիցների ընտրությունը, ինչպես նաև այնպիսի հարցերի սահմանումը, որոնք կամ պահանջում են, կամ գուցե նաև պահանջում ստանալ համազգային և տեղական աջակցություն: Կուսակցությունների զարգացման մեկ այլ խնդիր, որը բազմիցս շեշտվել է ԵԱՀԿ և Եվրոպայի խորհրդի փորձագետների կողմից ուկրաինական քաղաքական կուսակցությունների համակարգի գնահատականներում, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումն է: Եվրոպայում բավականին ընդունված է ֆինանսավորել ոչ միայն խորհրդարանական կուսակցություններին, այլև այն քաղաքական կուսակցություններին, որոնք թեև չեն կարողացել հաղթահարել ընտրական շեմը, սակայն ստացել են որոշակի ընտրազանգվածի աջակցությունը: Միևնույն ժամանակ, քաղաքական կուսակցությունների ուղղակի ֆինանսավորումը պետության կողմից սահմանափակված է բազմաթիվ երկրներում, և, որպեսզի քաղաքական կուսակցություններին հրապուրեն պետական ռեսուրսներից բացի այլ ռեսուրսներ հայթայթելու հեռանկարով, յուրաքանչյուր կուսակցությանը տրամադրվող ֆինանսական օժանդակության ծավալը սահմանափակ է: Այսօր Ուկրաինայում քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման համակարգը չի խրախուսում դրա զարգացումն ու կայունացումը: Բազմաթիվ քաղաքական ուժեր կամ չեն կարողանում իրենց համապատասխան դիրքը գտնել քաղաքական դաշտում կամ Էլ ընկնում են արտաքին հովանավորների ազդեցության տակ, ովքեր համաձայնվում են ֆինանսապես աջակցել կուսակցությանը ներկայացուցչական իշխանություններում իրենց շահերի

լրբբինգի դիմաց: Նույնիսկ նման սցենարի հավանականությունը հակասում է ամբողջականացված ժողովրդավարության ոգուն: Սակայն իրավական պատշաճ կանոնակարգումը կարող է հիմք ստեղծել տնտեսապես հզոր շրջանների կողմից կառավարության վրա ճնշումները սահմանափակելու համար:

Վերը նկարագրված խնդիրները վկայում են այն մասին, որ Ուկրաինայում անհրաժեշտ է շարունակել քաղաքական ինստիտուտների բարեփոխումները: Այս համատեքստում սահմանադրական փոփոխությունների շարունակականության վերաբերյալ քննարկումները, որոնք վերջին երկու տարիներին ներառել են քաղաքական գործիչների, փորձագետների, քաղաքացիական հասարակությանը և մամուլին, բավականին արդյունավետ էին, քանզի դրանք կարող են հիմք հանդիսանալ «խաղի ընդհանուր կանոնների» շուրջ լայն փոխհամաձայնության կայացման համար: Նման փոխհամաձայնեցումը կհանգեցնի եվրոպական ժողովրդավարական արժեքների կայացմանը, ինչպես նաև պետական կարգի արդյունավետությանն ընդհանրապես: Հաշվի առնելով ԵԱՀԿ և Եվրոպայի խորհրդի կողմից տրամադրվող ակտիվ աջակցությունը՝ Ուկրաինան հնարավորություն ունի առավելապես արդյունավետորեն օգտագործել օտարերկրյա փորձը պատշաճ կառավարման և ժողովրդավարական ամբողջականացման եվրոպական չափանիշները ամրագրելու համար:



ՀՀ Նախագահի օգնական

### **Արդյո՞ք Եվրոպան կտեսնի իր Հարևանության քաղաքականության ավարտը**

Հարգելի գործընկերներ, տիկնայք և պարոնայք,

Նախ կցանկանայի շնորհակալություն հայտնել Մարդկային զարգացման միջազգային կենտրոնին և համաժողովի բոլոր համաֆինանսավորողներին այս միջոցառման հիանալի կազմակերպման համար: Նման քննարկումներն իսկապես մեծ նշանակություն ունեն թե՛ ակադեմիական և թե՛ գործնական տեսանկյունից: Ակադեմիական առումով դրանք հնարավորություն են ընձեռում կանոնավոր կերպով վերանայել մեր ձեռքբերումները և ձախողումները Եվրոպական միության մեջ և դրա շուրջ անվտանգության նոր համակարգի կառուցման շրջանակներում: Գործնականորեն նման քննարկումները կարևոր են, քանզի դիվանագետների և քաղաքական գործիչների ակտիվ մասնակցությունը, թերևս, բավականին խոսուն փաստ է, որը վկայում է այն մասին, որ այս համաժողովներն ավելին են, քան զուտ ակադեմիական միջոցառումները:

Այս համաժողովը բացառություն չէ: Այսօր ընդամենը մի քանի օր է մնացել մինչև Նախագահ Սարգսյանի երկու կարևոր այցերը: Դրանցից մեկը նրա այցն է Ֆրանսիա, որտեղ Նախագահը անդրադառնալու է երկկողմ խնդիրների բավականին լայն շրջանակի, սակայն ակնհայտորեն խոսելու է Նախագահ Սարգսյանի հետ՝ որպես Եվրոպական միության նախագահությունը ստանձնած երկրի նախագահի:

Մյուս այցը Բրյուսել է: Նախագահ Սարգսյանի համար սա նոր քաղաք չէ: Նա բազմաթիվ հնարավորություններ է ունեցել այցելել Բրյուսել որպես

Պաշտպանության նախարար, քննարկելու ՆԱՏՕ-ի վերաբերյալ խնդիրներ, իսկ անցյալ տարի՝ նաև որպես ՀՀ Վարչապետ: Սակայն այս այցն այլ բնույթ է կրելու, որովհետև Սերժ Սարգսյանն այժմ այցելելու է այնտեղ այլ կարգավիճակով: Բացի այդ, մեր երկիրն արդեն անցել է ԵՀՔ պլանավորման և իրականացման նախնական փուլը և Եվրոպական միությունում կան կարծիքներ, թե պետք է ընդայննել հարաբերությունների ներկա շրջանակը:

Հարգելի գործընկերներ,

Անցյալ տարի ինձ խնդրել էին ելույթ ունենալ համանման մի համաժողովում, և ես խոսեցի Եվրոպական հարևանության քաղաքականության մասին, որպես իր իսկ իրականացման գործընթացում ձևավորվող քաղաքականություն, այսինքն մենք սովորում ենք հենց իրականացման ընթացքում: Ես առաջարկեցի այն տեսակետը, թե մի կողմից Եվրոպական միությունը, իսկ մյուս կողմից գործընկեր երկիրն են որոշելու, թե որքան հեռու են նրանք ցանկանում, մտադրվում և կարողանում տանել իրենց երկկողմ և բազմակողմ հարաբերությունները:

Այդ ժամանակվանից ի վեր մի շարք կարևոր քայլեր են արվել: Հարևանները տարբեր, սակայն պարտավորվածություն ենթադրող դիրքորոշումներ են որդեգրել դեպի Եվրոպա իրենց ցանկություններում, իսկ Եվրոպան հետևողականորեն սահմանել է իր ակնկալիքները և պլանները իր հարևանների խմբերի հետ:

Մեր տարածաշրջանի երկրների համար մենք տեսանք Նոր նախաձեռնության ծնունդը, որը հայնտի է որպես Արևելյան գործակցություն: Այս նախաձեռնությունը ենթադրում է հատուկ վերաբերմունք Ուկրաինային, Մոլդովային, Հայաստանին, Վրաստանին, Ադրբեջանին և որոշակի պայմաններով, Բելառուսին՝ իհարկե ապագայում: Ակնհայտ է, որ այս լեհ-չվեդական նախաձեռնությունը, որին աջակցում է սպասվող չեխական նախագահությունը, Եվրոպական միությունում քննարկումների նշանակալի շրջանի միջով է անցնելու՝ մինչև որոշակի քաղաքական քայլերի մեջ նյութականացվելը: Սակայն, այնպես, ինչպես այն մշակված է ներկա փուլում, դա բավական հավակնոտ և ամուր շրջա-

նակ է, որը թույլ կտա կոնկրետ և տեսանելի քայլեր նախաձեռնել թե՛ Եվրոպական միության, թե՛ ԵՀՔ երկրների քաղաքացիների համար առավել ապահով կեցության եվրոպական տարածք ձևավորելու ուղղությամբ:

Եվ այսօր ես կցանկանայի առաջարկել այն տեսակետը, թե Արևելյան գործակցությունը կարող է վերածվել թե՛ անեծքի և թե՛ բուժամիջոցի: Կարևորագույն հարցը սա է. կարո՞ղ ենք արդյոք միասնական ուժերով օգտագործել այս նախաձեռնությունը՝ շահագրգռելու մեր հասարակություններին և քաջալերելու ԵՀՔ գործընկեր երկներում եվրոպական ինտեգրման ջատագովներին, թե՞ փոխարենը կնպաստենք հուսահատության և ապագա եվրոպական նախաձեռնությունների հանդեպ անվստահության ձևավորմանը:

Եթե Արևելյան գործակցությունն սկսվի պլանավորած, շահագրգռ և արդյունավետ քաղաքականությունների ուժգին մղումով, այն կարող է իրական փոփոխություն մտցնել ԵՀՔ երկրների քաղաքացիների կյանքում՝ արդյունքում այս վեց երկրներում փոխելով ԵՄ-ի վերաբերյալ ընկալումները:

Իմ կարծիքով, Արևելյան գործակցության հաջողության միակ գրավականն այս երկրներում տարածաշրջանային ինքնության ձևավորումն է: Այլ կերպ, Արևելյան գործակցությունը ոչնչով չի տարբերվի այլ նախաձեռնություններից, եթե այն փորձի փոխարինել համատեղ ջանքերի մղումը եվրոպական միության և այս վեց երկրներից յուրաքանչյուրի հետ երկկողմ հարաբերությունների զուտ մաթեմատիկական գումարով:

ԵՀՔ-ն գործիք է, որը թույլ է տալիս ԵՄ անդամների և գործընկերների միջև հարաբերությունները խորացնել առանց որևէ սահմանափակումների: Այսպիսով, Արևելյան գործակցության աղն ու իրական արժեքը վիզային համակարգի հեշտացման վերաբերյալ հատուկ պայմանների խոստումը կամ «Նախապատվությունների ընդհանուր համակարգ +»-ը չէ, կամ էլ ինչ-որ այլ բան, որին կարելի է հասնել ԵՀՔ Գործողությունների ծրագրի շրջանակներում: Գործակցության Եռությունը ավելի ապահով տարածաշրջանային կեցության տարածքի ձևավորումն է, որը կարևոր է թե՛ Եվրոպայի, թե՛ Նշված տարածաշրջանի

համար: Այս առումով, շատ կարևոր է, որպեսզի Արևելյան գործակցությունը ներառող և ոչ-ամճակատման բնույթ ունենա: Այն պետք է օգնի լուծել առկա խնդիրները, ոչ թե՛ Նորերի ստեղծման պատճառ հանդիսանա: Այլ կերպ, Արևելյան գործակցության միջոցով համագործակցությունը չպետք է նախագծվի կամ ընկալվի որպես «գրո հանրագումարով» խաղ, որն ուղղված է ինչ-որ մեկի դեմ: Իսկ ընդգրկված երկրներին պետք է լրջորեն նախագուշացնել, որպեսզի որևէ մեկը չկիրառի որևէ պրոպագանդա կամ խորհրդանիշ այս նախաձեռնության մեջ ներգրավված կողմերի միջև որևէ լարվածություն կամ թյուրիմացություն ստեղծելու նպատակով: Ավելին, երկրներից ոչ մեկը չպետք է զգա այն ճնշումը, որ մեղսցիները զգացին 24 դար առաջ աթենացիների հետ հայտնի Մելոսյան երկխոսության ժամանակ, որը վերաբերվում էր վերջիններիս լիզային միանալուց հրաժարվելուն:

Եվրոպական միությունն ավելի շուտ պետք է օրակարգ հաստատի, քան հետևի գոյություն ունեցող օրակարգին: Այն պետք է ավելի վճռական լինի, ավելի հստակ և տեսանելի: Եվրոպան բավականին բան ունի առաջարկելու հատկապես աշխարհի այս մասում և այդպես էլ պետք է անի: Այն պետք է ներկայացնի իր քաղաքականության խնդիրները և բավականին պահանջկոտ գտնվի իր գործընկերների հետ՝ այդ օրակարգով ենթադրվող ակնկալիքներն իրականացնելու հարցում: Այն պետք է խիստ լինի իր գործընկերների հետ թե՛ նրանց ներքին քաղաքականությունների, վարքի և ամրագրած արդյունքների առումով, թե՛ հորիզոնական կապեր և համագործակցություն հաստատելու նրանց ունակության առումով: Այլ կերպ, հորիզոնական համագործակցության և տարածաշրջանային ծրագրերի իրականացման բաղադրիչը պետք է պարտադիր լինի այլ կերպ անիմաստ այս նախաձեռնության մեջ: Այնպես ինչպես հետպատերազմյան Եվրոպան էր ստիպված ընդհանուր համակենցության տարածաշրջանային դասեր սովորել, քանզի անհրաժեշտ էր դիմակայել առավել լուրջ մարտահրավերներին և սպառնալիքներին, այնպես էլ Նոր հարևանները պարտադրված են սովորելու այդ դասերը: ԵՉՔ Գործողությունների ծրագրի մոտեցման համեմատությամբ Արևելյան գործակցության առաջընթացը շահառուների հավաքական ինքնության ձևավորման հնարավորությունն է, և այն պետք է ամբողջովին օգտագործվի:

Ինձ մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվել, թե արագորեն փոփոխվող միջազգային քաղաքական ասպարեզում ինչ-որ շտապողականությամբ գեղեցիկ շարադրված վերնագրեր ու պիտակներ են մշակվում, երբեմն առանց դրանք իրականացնելու հաստատականությամբ: Ինչպե՞ս կարող ենք խոսել եվրոպական արժեքներից, ապրանքների, ծառայությունների, ֆինանսական ռեսուրսների և աշխատուժի ազատ տեղաշարժից և միևնույն ժամանակ հանդուրժել ԵՄ հարևանների միջև փակ սահմանների ամրապնդությունը: Որքա՞ն է Եվրոպան շարունակելու քննարկել Թուրքիայի հետ այս խնդիրը բարձրացնելու նպատակահարմարությունը, Ասկարայի հետ Եվրամիության անդամակցության խնդրի քննարկան վերելքներում ու վայրէջքներում: Երբ ԵՅԶ-ի իրականացման գործընթացն արդեն սկսված է, իսկ Թուրքիայի հետ շարունակվում են անդամակցության բանակցությունները, Հայաստանի և Թուրքիայի միջև փակ սահմանների խնդիրն այլևս դադարում է միայն այս երկու երկրների միջև խնդիր լինելուց: Այդ բաժանարար սահմանն այլևս Եվրոպական արժեքների ողջ համակարգի փորձաքարն է:

Տիկնայք և պարոնայք,

Երբ ես ասում եմ, որ Արևելյան գործակցությունը պետք է իրապես մասնակցային բնույթ ունենա, ես իսկապես նկատի ունեմ հենց դա: Ես չեմ կարծում, թե միայն այս նախաձեռնությունը կարող է լուծել այս բավականին բարդ տարածաշրջանի բոլոր խնդիրները: Ես չեմ ակնկալում, թե այն պետք է տա բոլոր հարցերի պատասխանները: Սակայն, ես հույս ունեմ, որ այն կարող է փոխել առկա դինամիկան: Այն կարող է ճանապարհ հարթել մի քանի, եթե ոչ բազմաթիվ, տարածաշրջանային ծրագրերի համար, որոնք իսկապես ներառում են բոլոր գործընկեր երկրներին:

Եթե նայենք Արևելյան գործակցության աշխարհագրությանը, ապա նշանակալի է այն հանգամանքը, որ Բելոռուսից բացի, որի համար հեռանկարները դեռևս հեռավոր են և անորոշ՝ ըստ փաստաթղթի ներկա ախտատանքային տարբերակի, այն ներկայացնում է ԳՈՒԱՄ-ը՝ գումարած Հայաստանը: Այդ իսկ պատճառով արժեքների վրա հիմնված մոտեցում և բավականին ջանք է պահանջվելու Ար-

նելյան գործակցության քաղաքականությունը հետևողական, հավասարակշռված և կայուն կերպով մշակելու համար: Իմ կարծիքով, Եվրոպական միության համար Արևելյան գործակցության մշակման գործընթացը հատկապես բարդ է այն պատճառով, որ գործընկեր երկրների Եվրոպային միանալու ցանկության աստիճանը բավականին տարբեր է, և նրանց համար միասնական վեկտորի մշակումը դժվարին հանձնարարական է: Սակայն, այս տարբերությունը հաշվի առնելու արդյունավետությունը պետք է հիմնված լինի այլ տարածաշրջանային և համաշխարհային ուժերի հետ համագործակցության վրա: Այս երկրների նկատմամբ Եվրոպական քաղաքականությունը պետք է փոխադարձաբար ամրապնդվի բազմաթիվ դոնորների և մասնագիտացված փորձագետների համայնքների ջանքերի համադրմամբ և համատեղ գործողություններով, ինչպես նաև տարաբնույթ ձևաչափերի կիրառմամբ:

Իհարկե, անկախ նրանից, թե ինչ գործիքով է չափվելու առաջընթացը՝ Անդամակցության համաձայնագրերով, Գործողությունների ծրագրերով, թե ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների այլ ձևաչափերով, յուրաքանչյուր երկրի առաջընթացը պետք է գնահատվի և համապատասխան քայլեր պետք է նախաձեռնվեն տվյալ երկրին հատուկ արժանիքների և ձեռքբերումների հիման վրա: Սակայն այս նվաճումների գնահատումը աներկբայորեն պետք է ներառի մեկ այլ չափանիշ. արդյոք տվյալ երկիրը նպաստե՞լ, թե՞ խոչընդոտել է տարածաշրջանային համագործակցության հեռանկաների իրականացմանը:

Չարգելի գործընկերներ,

Երբ նախապատրաստվում էի այս ելույթին, աչքի անցկացրեցի անցյալ տարվա իմ ելույթի նոթերը և կցանկանայի մի քանի դիտարկումներ անել այն մասին, թե ինչ զարգացումներ են եղել այդ ժամանակվանից ի վեր: Չայաստանի համար այս տարին հարուստ էր իրադարձություններով: Նախագահական ընտրությունները և հետընտրական իրադարձություններն ուղղակիորեն կապված են Չայաստանի Եվրոպական նկրտումների հետ: Անցյալ տարի ես ընդգծեցի, որ ԵՅԶ-ի հաջողությունը չափվելու է հասարակության վերափոխման և հասարակական հա-

րաբերությունների մակարդակում ազատականության որոշակի աստիճանի հասնելու չափանիշներով:

Այդ ժամանակներից ի վեր Յայաստանն անցել է տխուր իրադարձությունների միջով: Դրանք դրամատիկ իրադարձություններ էին և խորն են դաշվել հանրային հիշողության մեջ: Սակայն, կցանկանայի համարձակ մի դիտարկում անել, թե այդ իրադարձությունները դարձան նաև փոփոխության համար կարևորագույն մի կատալիզատոր:

Ես կարծում եմ, որ չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ հայտնի իրադարձություններից հետո ՀՀ իշխանությունները հստակորեն հայտարարեցին իրենց կամքը՝ երկրում իրավապահ մարմինների կարգավիճակի գնահատման և դրա շուրջ խորհրդատվություն ստանալու համար միջազգային փորձագիտության ներգրավվման վերաբերյալ: Այս հանգամանքը շեշտվել է Նախագահ Սարգսյանի՝ Ֆրանսիայի և Եվրոպական հանձնաժողովի նախագահներին հղված նամակներում և երկուսի պատասխանն էլ արտահայտում էր նրանց պատրաստակամությունը՝ աջակցելու այդ գործընթացին ողջ իրականացման ընթացքում:

Անցյալ տարի ես խոսում էի ԵՀՔ Գործողությունների ծրագրի կետերը առավել ընդգրկուն քաղաքական օրակարգ և կառավարության գործողությունների ծրագրերի մեջ ներառելու անհրաժեշտության մասին և այսօր ուրախ եմ, որ մեզ հաջողվել է իրականացնել դա Յայաստանում: Ավելին, Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավարի՝ պրն. Ռաուլ Լուզենբերգերի աջակցությամբ մենք կարողացել ենք մշակել Յայաստանի կառավարության համար Եվրոպական խորհրդատուների վերաբերյալ փաստաթուղթը: Կարծում եմ, սա Եական նվաճում է, որը կարող է ապահովել Յայաստան-ԵՄ հարաբարերությունների արդյունավետ և արագ առաջընթացը: Կցանկանայի օգտագործել այս առիթը և շնորհակալություն հայտնել պրն. Լուզենբերգերին և ԵՄ նախագահությունը ներկայացնող դեսպան Սմեսովին, Նախագահի այդ նախաձեռնության հանդեպ լիակատար ուշադրություն ցուցաբերելու համար:

Անցյալ տարի ես խոսեցի նաև արժեքների վրա հիմնված եվրոպական ինքնուրույն մասին: Կարծում եմ, Գործողությունների ծրագրերի իրականացման համար մենք պետք է շարունակենք աջակցել և խրախուսել «Մարդիկ մարդկանց հետ» հարաբերությունները: Այստեղ ես կցանկանայի մասնավորապես դիմել Հայաստանում հավատարմագրված ԵՄ դեսպանատներին: Ճիշտ է, որ Հայաստանը դեռևս մի շարք բարեփոխումներ պետք է իրականացնի, մինչև կարողանա օգտվել մուտքի արտոնագրերի ստացման գործընթացի հեշտացման մեխանիզմի առավելություններից: Սակայն կարծում եմ, որ նույնիսկ այսօր բավականին հիմքեր կան, ինչպես նաև հանրային ակնկալիքներ, հյուպատոսական բաժինների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիների որոշակի խմբերին մուտքի արտոնագրերի տրամադրման գործընթացում ճկունության առավել բարձր մակարդակ դրսևորելու համար: Առնվազն տարբեր մասնագետները, գիտնականները, ստեղծագործ կատարողները և ուսանողները, ովքեր պաշտոնական հրավերքներ ունեն, պետք է ավելի կառուցողական վերաբերմունքի արժանանան:

Եվրոպական գործընթացի հաջողության համար անհրաժեշտ է, որպեսզի այն առավել միտված լինի դեպի հասարակությունը: Ըստ Էուրոյան, հենց հանրության խնդրանքով պետք է բարձրացվի հարաբերությունների մակարդակը: Եվ ամեն անգամ, երբ հանրային կարծիքն ավելի դինամիկ է իր պահանջներում, քան մենք, ներքին և միջազգային քաղաքացիական ծառայողներս կարող ենք բավարարել այդ պահանջները: Միայն այս դեպքում կարելի է խոսել հասարակական մակարդակում իրական փոփոխության մասին: Եվ մենք պետք է խրախուսենք դա ուսանողական կապերի, ակադեմիական փոխանակման ծրագրերի, ինչպես նաև հետազոտական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների միջև ավելի ակտիվ փոխհարաբերությունների միջոցով:

Հարգելի գործընկերներ,

Ամփոփելով՝ կցանկանայի մեկ անգամ ևս շեշտադրել երեք հիմնական դրույթները, որոնց անդրադարձա իմ ելույթի ընթացքում.



Արևելյան գործակցությունը ողջունելի նախաձեռնություն է, սակայն այն պետք է կարողանա ապացուցել իր հայեցակարգային տարբերությունը արդեն իսկ գործող ԵՅՔ գործիքներից: Մեր կարծիքով, նման տարբերության եական ցուցանիշը տարածաշրջանային հարթույթը պետք է լինի: Արևելյան գործակցության հաջողության համար անհրաժեշտ է, որ այն ներառական լինի, միևնույն ժամանակ այն պետք է հենվի այն բոլոր ջանքերի վրա, որոնք իրականացվում են այս տարածաշրջանում ակտիվ այլ շահագրգիռ կողմերի կողմից:

Յուրաքանչյուր գործընկեր երկրի գնահատումը պետք է հիմնվի տվյալ երկրի արժանիքների, նվաճումների և ձախողումների վրա: Անհատական գործընկերների առաջընթացը չպետք է կապվի ընդհանուր տարածաշրջանի առաջխաղացումը հավասարակշռելու փորձերի հետ, քանի որ գործընկերները նշանակալիորեն տարբերվում են եվրոպական ինտեգրման իրենց ցանկությունների մակարդակով:

Հասարակությունների միջև հարաբերությունները պետք է այս բոլոր ջանքերի անկյունաքարերը լինեն, քանի որ Հարևանության, ինչպես նաև Արևելյան գործակցության վերջնական նպատակը Եվրոպական միությունը շրջապատող երկրներում հասարակական փոփոխություններն են:

Շնորհակալություն ուշադրության համար:

**Photos from the Conference**

**Նկարներ համաժողովից**



























